«ԳԻՐՔԻՄՔ» ՄՈՍԿՎԱՅԻ

Գրաբարից աշխարհաբարի վերածեց
ՄԵԴԱ ՍՏԱՄԲՈԼՑԵԱՆԸ

Նախաբանը՝
ՅԱԿՈԲ ՔԵՈՍԷԵԱՆԻ

Խմբագիր՝
Տ. ՄԵՍՐՈՊ ՔԱՀԱՆԱՅ ԱՐԱՄԵԱՆ

Նկարիչ՝
ԱՐՄԷՆ ՔԻՒՐՔՉԵԱՆ

ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏ

Խօսք ճշմարիտ հաւատքի եւ սուտ վարքի մասին

«ԳԱՆՁԱՍԱՐ» ՀԱՆԴԷՍ 1992

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ՎԱՉԳԵՆԻ Ա

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. ՊԱՐԳԵՒԻ

ՍՐԲԱԶԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ԱՐՑԱԽԱՅ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Հայ Եկեղեցու աստուածաբանական ժառանգութեան մէջ իրենց ուրոյն տեղն են զբաղեցնում խրատները: Սրանք ներկայացնում են հոգեւոր գրականութեան այն ոլորտը, որն առաւելագոյն ներդաշնակութեամբ արտացոլում է բարոյական աստուածաբանութեան տեսական եւ գործնական սկզբունքները: Այս է պատճառն այն տեւական հետաքրքրութեան, որ մեր հայրերը ցուցաբերել են խրատների նկատմամբ: Այդ հետաքրքրութիւնն արտայայտուած է տակաւին հայ դպրութեան արշալոյսին, երբ պատշաճ նկատուեց Աստուածաշունչ մատեանի հայացումը սկսել խրատական բովանդակութիւն ունեցող «Առակաց» գրքի թարգմանութեամբ: Աւելի ուշ սրան հետեւեցին սուրբ հայրերի, Խիկար Իմաստունի խրատների, «Բանք իմաստնոց» անունը կրող ժողովածուների թարգմանութիւնները: Վերջիններս լուրջ խթան դարձան հայ ինքնուրոյն խրատագրութեան համար: Այդ թարգմանութիւնների հիման վրայ զարգացաւ քրիստոնէական խրատագրութիւնը հայ իրականութեան մէջ: Ի թիւս խրատագիր մի շարք հեղինակների (Մխիթար Գոշ, Վարդան Այգեկցի, Յովհաննէս Գառնեցի եւ ուրիշներ)՝ ձեռագիր մատեանները յիշում են նաեւ Գրիգոր վարդապետի անունը: Խրատները ժամանակին վերագրուել են ս. Գրիգոր Նարեկացու գրչին եւ թէաբար զետեղուել նրա մատենագրական ժառանգութիւնն ամփոփող հատորի մէջ (տպ. Վենետիկ, 1840, էջ 483–533): Հրատարակիչներն այս վերագրումն արդարացուած են համարում այն հիմամբ, թէ «բիւզանդացւոց տպագիրք», ինչպէս նաեւ՝ գերմանացի մեծանուն հայկաբան Յոհան Շրոդերն իր «Արամեան լեզուին գանձ» աշխատութեան (տպ. Ամստերդամ, 1711) մէջ Նարեկացու անունով են յիշատակում այս խրատները: Սակայն, միւս կողմից, հրատարակիչները ծանուցում են, որ Յայսմաւուրքի մէջ զետեղուած (Մեհեկի ԻԱ) Նարեկացու վարքում, ուր մի առ մի թուարկում են նրա մեզ յայտնի բոլոր երկերը, այս խրատաշարը չի յիշատակւում[1]: Ելնելով այս իրողութիւնից, ինչպէս նաեւ՝ ԺԲ–ԺԳ դդ. նշանաւոր մատենագիր, Նարեկացու անուանակից Գրիգոր Սկեւռացու Աղօթագրքի եւ խնդրոյ առարկայ դարձած խրատաշարի մէջ նկատուող աստուածաբանական բացորոշ ընդհանրութիւններից (որոնք Աղօթագրքի մէջ դրսեւորւում են խոստովանական մաղթանքի ձեւով, իսկ խրատաշարում՝ խրատական, յորդորական «բանիւ»)՝ իրաւացիօրէն ենթադրում են, որ խրատաշարը վերագրելի է նրան: Հետե-

1 Տե՛ս Յայսմաւուրք, Կ. Պոլիս, 1834, էջ 99:

ւելով վենետիկեան հրատարակութեանը՝ «Գանձասար» հանդէսի խմբագրութիւնը նպատակայարմար գտաւ այդ խրատներից մի քանիսի աշխարհաբար թարգմանութիւնն ընթերցողին ներկայացնել ս. Գրիգոր Նարեկացու անունով (1992, Ա, էջ 165): Սակայն վերոյիշեալ փաստերը ցոյց են տալիս, որ խրատները շատ աւելի մեծ հաւանականութեամբ վերագրելի են Գրիգոր Սկեւռացու գրչին[1]:

Ծնուել է ԺԲ դարի վերջին քառորդին Լամբրոն աւանում, որի պատճառով յաճախ կոչւում է նաեւ Լամբրոնացի: Ուսումն ու կրթութիւնը ստացել է Սկեւռայ վանքում Եկեղեցու նշանաւոր հայր Ներսէս Լամբրոնացու (1153–1198 թթ.) մօտ: Գրիգոր Սկեւռացին իր մեծանուն ուսուցչի նման գործուն մասնակցութիւն է բերել քաղաքական, եկեղեցական կեանքին: Եղել է Լեւոն Մեծի խոստովանահայրը: 1221 թ. Կոստանդին Բարձրաբերդցու հետ առաջադրուել է կաթողիկոսական աթոռի թեկնածու: 1256թ. «[Յ]ընտրութենէ Սուրբ Հոգւոյն եւ բազմաց վկայութեամբ եպիսկոպոս ձեռնադրի մեծաշուք ուխտին Սկեւռայի»[2]: Այստեղ ծաւալել է մանկավարժական գործունէութիւն: Ամենայն հաւանականութեամբ մահացել է 1264 թ.:

Գրիգոր Սկեւռացին թողել է բաւական հարուստ աստուածաբանական ժառանգութիւն: Բացի նրան վերագրելի խրատներից, հեղինակի գրչին են պատկանում մեկնողական երկեր, աղօթքներ, ճառեր, ներբողներ եւ այլն: Սրանց զգալի մասը հրատարակուած է ԺԸ–ԺԹ դդ.: Ինչպէս արդէն գիտենք, հրատարակութեան արժանացած երկերից է Գրիգոր վարդապետի խնդրոյ առարկայ խրատաշարը:

Աշխատութիւնը շարադրելիս Գրիգոր վարդապետն օգտուել է չորս կարգի աղբիւրից.

Ա. Աստուածաշնչական,

Բ. Դաւանաբանական,

Գ. Վարքագրական,

Դ. Մարդաբանական:

Ա. Բառացի վկայութիւններից զատ Գրիգոր վարդապետն Աստուածաշնչից օգտւում է ոչ բառացի, իմաստային առաջաբերութեան միջոցով: Այդպիսիք են, օրինակ, հետեւեալ հատուածները, որոնք ուղ-

1 Ն. եպս. Պողարեան, Հայ գրողներ, Ե–ԺԷ դդ., Երուսաղէմ, 1971, էջ 273, էդ. սրկ. Միրզախանեան, Գրիգոր Սկեւռացու մատենագրական ժառանգութիւնը (անտիպ):

2 Տե՛ս էդ. Բաղդասարեան, Գետրգ Սկեւռացու «Վարքը», «Բանբեր մատենադարանի», 1964, հտ. 7, էջ 405:

ղակի կամ անուղղակի ձեւով ակնարկում են Աստուածաշնչի այս կամ այն տեղը. «Բայց դու զգո՛յշ եղիր՝ գործով փութալու ասածներիս կատարման մէջ՝ ըստ ժիր եւ հաւատարիմ ծառայի օրինակի, որ արթնութեամբ սպասում էր տիրոջ գալստեանը» (Հմմտ. Մատթ. ԻԴ 45), «Թէ մեղքերը մրի պէս անլուանալի սեւ լինեն, իբրեւ ձիւն կսպիտակեն, եւ թէ արեան պէս կարմիր լինեն՝ ասես որդան կարմիրով անելանելի կերպով ներկուած, իբրեւ մաքուր բուրդ կսրբուեն» (Հմմտ. Եսայի Ա 18), «Եւ Կայէնի մարդասպանութիւնը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ՝ [այն], որ չկարողացաւ նայել Հաբէլի՝ Աստծուն հաճելի պատարագներին: Իսկ Յովսէփի եղբայրները, բաղձալի երազատեսութեանը նախանձելով, կամեցան սպանել նրան եւ ապա այլազգիներին վաճառեցին, ինչպէս որ Տիրոջը չարչարանքների եւ մահուան մատնեցին: Նաեւ Դաւթին սպանելու նպատակով Սաուղի բազմահնար մեքենայութիւններն այլեւս ինչի՞ց էին, եթէ ոչ՝ [նրանից], որ ժողովրդի աչքին սիրուած եւ պատուած էր նրան տեսնում եւ պարողներից լսում, թէ Դաւիթը բիւրատրների կոտորեց»: (տե՛ս Ծնն. Դ 4–9, ԼԷ 28, Ա Թագ. ԻԱ 11, ԻԹ 5):

Բ. Յանձին Գրիգոր վարդապետի՝ խրատների մէջ երեւում է Հայ Եկեղեցու դաւանաբանութեան նախանձախնդիր պաշտպանը: Առաջին հերթին այն դրսեւորւում է Նիկիոյ եկեղեցական տիեզերաժողովում (325 թ.) ընդունած եւ Հայ Եկեղեցու կողմից մէկընդմիշտ վաւերացուած հաւատոյ հանգանակի յիշատակմամբ («Հաւատամք եւ յայս միայն ընդհանրական եւ առաքելական Եկեղեցի... ի կեանսն յաւիտենից»)[1]: Դաւանական հարցերը մշտապէս եղել են մեր հայրերի ուշադրութեան կենտրոնում: Այս տեսանկիւնից մասնաւորաբար յատկանշանական են Գրիգոր վարդապետի երրորդաբանական խորհրդածութիւնները, որոնց մէջ առաւել խտացուած կերպով արտայայտուած է Հայ Եկեղեցու որդեգրած երրորդաբանական սկզբունքը, ըստ որի՝ Հայր Աստուած բնորոշւում է որպէս *ճշմարիտ Էութիւն, կատարեալ Գոյ, անեղ, անսկիզբ, անժամանակ, անպատճառ, անիմանալի, անտեսանելի, անճառելի, անհաս, պարզ, անզնին, անվերջ, անսահման, աներբ, անուր...* Որդի Աստուած՝ *Էութեան կերպարանք եւ ճառագայթ, կենդանի նկարագիր եւ կնիք, իմաստութիւն եւ զօրութիւն... Աստուած՝ Աստծուց, անեղ՝ անեղից, անժամանակ՝ անժամանակից, կեանք՝ կեան-*

1 «Հրահանգ քրիստոնէական հաւատոյ ըստ ուղղափառ դաւանութեան Եկեղեցւոյ Հայաստանեայց՝ աշխատ. Մատթոյ վարժապետի Գրիգորեան Զմիտնացւոյ», Մոսկուա, 1850, էջ ԻԹ:

քից... Հոգին Սուրբ Աստուած՝ *անճառաբար բխում Հօրից՝ ոչ Որդու պէս՝ ծննդեամբ, այլ՝ Էութիւնից ելնողութեամբ... Էակից՝ Հօրը եւ փառակից՝ Որդուն:* Սուրբ Երրորդութեան Երեք Անձերը բնութագծում են երեք ընդհանրական որակումներով՝ ծնողութիւն, ծնելութիւն եւ ելողութիւն: Սոյն եզրերի կիրարկման մէջ Գրիգոր վարդապետը պահպանում է առանձնայատուկ հոգեհարազատութիւն Հայ Առաքելական Եկեղեցու հաստատագրած դաւանութեան նկատմամբ: Այսպէս. արդէն Հիպպոդիտոս Բոստրացու (236–237թ.) Սուրբ Երրորդութեանը նուիրուած «Հարցուպատասխանիի» մէջ կարդում ենք. «Զի այսպէս զծնողութիւնն Հօր եւեթ իմանամք եւ զծնելիութիւնն Որդւոյ եւ զելողութիւնն Հոգւոյն Սրբոյ առանձինն...»[1]: Սուրբ Յովհաննէս Իմաստասէր Օձնեցին (Ը դար) «Ճառ ընդդէմ երեւութականաց» երկում, հիմնուելով տիեզերական Եկեղեցու երրորդաբանութեան վրայ, ասում է. «Արտորոշեալ ճանաչի ի նոսա դէմն այսուիկ. Հօր՝ ծնող գոլ, Որդւոյ՝ ծնունդ, իսկ Հոգւոյ՝ ելումն»: Իր պատարագի մեկնութեան մէջ Խոսրով Անձեւացին (Ժ դար) հաստատում է. «Այս է կատարումն հաւատոյն զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգին ճանաչել Երիս Անձինս եւ Մի Աստուած... ծնող՝ զՀայր, եւ ծնունդ՝ զՈրդի, եւ զելումն՝ զՀոգին՝ ի Հօրէ եւ ոչ ծնունդ»[2]:

Գ. Խրատներում օգտագործուած վարքագրական միակ աղբիւրը Նոնոս եպիսկոպոսի եւ Պելագիայի մասին պատմուող զրոյցն է, որ քաղուած է «Հարանց Վարքում» զետեղուած «Խրատք օգտակարք վասն զգուշութեան պոռնկութեան» խրատաշարից[3]:

Դ. Հայ Եկեղեցու աստուածաբանութեան բաղկացուցիչ մասն է մարդաբանութիւնը: Այն կարեւոր տեղ է զբաղեցնում հայ (եւ ոչ միայն՝ հայ) եկեղեցական մատենագրութեան մէջ: Գրիգոր վարդապետի մարդաբանական հայեացքները սնւում են եկեղեցական աւանդութեան հարուստ ակունքներից: Հիմնուելով պլատոնական իմաստասիրութեան լաւագոյն աւանդներն իր մէջ ամփոփած քրիստոնէական մարդաբանութեան գլխաւոր ձեռնարկ Նեմեսիոս Եմեսացու «Յաղագս բնութեան մարդոյ» երկի վրայ[4], ինչպէս նաեւ՝ արձագանքելով

1 «Կնիք հաւատոյ ընդհանուր Սուրբ Եկեղեցւոյ», հրատ. Կարապետ եպիսկոպոսի, Ս. Էջմիածին, 1914, էջ 10:
2 Տես Հրահանգ, էջ 157–158:
3 Տես «Վարք սրբոց հաբանց եւ քաղաքավարութիւնք նոցին...», հտ. Ա, Վենետիկ, 1855, էջ 670–673:
4 «Պղատոնի Իմաստասիրի Տրամախօսութիւնք Եթիմեան, Պաշտպանութիւն Սոկրատայ եւ Տիմէոս», Վենետիկ, 1877, էջ 144–146; «Նեմեսիոսի փիլիսոփայի Եմեսացւոյ Յաղագս բնութեան մարդոյ», Վենետիկ, 1899:

հայ եկեղեցական աստուածաբանութեան մէջ բազմիցս արծարծուած այդ գաղափարին («Հոգի եռամասնեայ է. բան ունի, ցասումն եւ ցանկութիւն»)[1]՝ Նա մասնաւոր ուշադրութեամբ խօսում է հոգու եռամասնեայ լինելու վերաբերեալ: Ըստ հեղինակի՝ հոգու երեք մասերին կամ յատկութիւններին համապատասխանում են երեք գլխաւոր առաքինութիւնները. բանականին՝ խոհականութիւնը, ցասմնականին՝ արիութիւնը, իսկ ցանկականին՝ ողջախոհութիւնը: Դասդասելով այս երեք առաքինութիւնները՝ նա նուիրապետական վերին սանդղակը շնորհում է բանականութեանը, *քանզի բանականը, որպէս միւսներից առաւել վեհ, առաջ է դասւում եւ իշխան ու հրամանատար է նրանց վրայ, քանզի նրա գործը խորհելը եւ, ըստ նոյնի, արժանին աւանդելն է երկուսին էլ՝ ցասմնականին եւ ցանկականին:* Ուրեմն, ցասմնականն ու ցանկականը գործում են բանականութեան թելադրանքով կամ կարգադրութեամբ:

Բանականի մաս է կազմում արդարութիւնը: Քանի դեռ այս երեքը մէկ–մէկու հետ յարաբերւում են նուիրապետական աստիճանակարգման ընկալեալ օրէնքներով (ցասմնականը ենթարկւում է բանականին, իսկ ցանկականը՝ ցասմնականին), մարդն ապրում է Աստուածութեան հետ ներդաշնակ համերաշխութեամբ, սակայն *եթէ վայելչական կարգը եղծուելով ապականւում է, ծառաները տէրերի վրայ են ելնում, իշխանութիւնը յափշտակում, տէրերին ծառայեցնում, այսինքն՝ երբ ցանկականը ցասմնականի, եւ ցասմնականը խոհականի վրայ է տիրում, ամէն ինչ խառնուելով ամբողջովին կործանւում է, եւ իրաքանչիւրը հակառակ ներգործութեան մէջ է շարժւում,* որի հետեւանքով խախտւում է Աստուծոյ եւ մարդու ներդաշնակ յարաբերութիւնը: Սա պատճառ է դառնում անմտութեան, բարկութեան, վաւաշոտութեան, անիրաւութեան, որոնք մարդուն զրկում են Աստուծոյ օրհնեալ ներկայութիւնից:

Խրատն առաւել դիպուկ եւ ներգործուն դարձնելու նպատակով հեղինակը դիմում է առակաւոր խօսքին: Հետեւելով դարի կանոնակարգուած մեկնաբանական յայտնի սկզբունքներին՝ Գրիգոր վարդապետը պիտառնում է քրիստոնէական խորհրդանշանի լեզուական միջոցները: Ցոյց տալու համար, որ չի կարող լինել կատարեալ փրկութիւն առանց առաքինի գործերի՝ հեղինակը հաստատագրում է, որ դրանց հիմքը հաւատքի վարդապետութիւնն է (Հմմտ. Ա Կորնթ. Գ

1 Տես «Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի», հտ. Ա, Վենետիկ, 1837, էջ 662:

10): Սակայն հոգեւոր շինութիւնն աւարտելու համար անհրաժեշտ են զանազան *շինանիւթեր՝* ոսկի, արծաթ, մեծագին քարեր: Ըստ հեղինակի մեկնաբանութեան՝ ոսկին նշանակն է *խոհական իմաստութեան,* արծաթը՝ *բանական առաքինութեան,* իսկ մեծագին քարերը՝ *պէսպէս... բարեգործութիւնների:* Շինութեան ընթացքում այս ընտիր շինանիւթերին ոչ հազուադէպ խառնւում են նաեւ փայտը, խոտը, եղէգը, որոնք նշանակներն են *մեղսագործութեան:* Եթէ առաջին երկու շինանիւթերը վերաբերում են հոգեւոր մարգին, ուր կատարւում են միայն աստուածահաճոյ գործեր, ապա մնացեալ շինանիւթերը՝ մարմնաւոր մարգին, ուր գործողութիւնները պայմանաւորուած են բացառապէս նիւթական շահագրգռութիւններով: Վերջին Դատաստանի Օրը բոլորի Դատաւորը կրակով պէտք է փորձի իւրաքանչիւրի հոգեւոր շինութեան ամրութիւնը, *քանզի եթէ ոսկի է կամ արծաթ, հրին ոչ միայն կուլ չի գնայ, այլեւ էլ առաւել պարզուելով կպայծառանայ... իսկ եթէ փայտ է, խոտ կամ եղէգ, շուտով այրուելով կապականուի:*

Գրիգոր վարդապետի խրատները հայ աստուածաբանական մտքի կարեւորագոյն նուաճումներից են: Դրանց մէջ լաւագոյնս մէկտեղուած են եկեղեցական աւանդոյթը, կրօնական փորձն ու աստուածաբանական գիտելիքները, որոնք նպատակ ունեն զօրացնել հաւատացեալի աստուածապաշտական զգացումները, հոգեւոր ծիրի մէջ պահել նրա անձը եւ նպաստել Աստուծոյ հետ նրա կենդանի հաղորդակցմանը:

Գիտակցելով խրատների այժմէականութիւնը՝ նպատակայարմար նկատուեց իրականացնել դրանց աշխարհաբար թարգմանութիւնն ըստ հետեւեալ հրատարակութեան. «Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Նարեկայ վանից վանականի մատենագրութիւնք», Վենետիկ, 1840, էջ 483–533:

ՅԱԿՈԲ ՔԵՌՄԷԵԱՆ

ԽՕՍՔ ՃՇՄԱՐԻՏ ՀԱԽԱՏՔԻ ԵՒ ԱՌԱՔԻՆԱՍԷՐ ՎԱՐՔԻ ՄԱՍԻՆ

Ա

Համաձայն տէրունական խրատի՝ Տէրն, ըստ պարգեւասէր եւ յոգնառատ բարերարութեան, առատապէս տալիս է բոլորին եւ չի նախատում, ինչպէս եւ ասաց. «Ով խնդրում է, ստանում է, եւ ով փնտրում է, գտնում է» [Մատթ. Է 8]: Որ նաեւ իմանալի [կերակուրներով]՝ գիտութեան հացով եւ իմաստութեան գինով, գեղեցկապէս կերակրեց քաղցած բանական անձանց եւ քարոզիչների բարձր ձայնով կանչեց հոգեւոր խրախճանքի՝ ըստ առակողի: Մեզ եւս նոյնն օրինադրեց՝ ասելով. «Ամէն մէկի, ով խնդրում է քեզանից, տո՛ւր» [Մատթ. Ե 42]: Եւ եթէ բարւոք է կարօտեալներին տալ մարմնական պէտքերը, որի փոխարէն եւ պարգեւեց ի սկզբանէ պատրաստուած արքայութիւնը, ո՞րչափ առաւել գովելի է հոգիների դատարկութիւնը բարիքներով լցնել: Եւ հոգին, տիրականի պատկերը լինելով, յոյժ առաւել է մարմնից, ինչպէս նաեւ՝ առաջին, մեծ եւ պատուական, իսկ մարմինը հողանիւթ է եւ նրա նկատմամբ երկրորդական, որը Տէրը գործով ցոյց տուեց: Քանզի միայն երկու անգամ է գրուած, թէ Իրեն հետեւող ժողովրդին հացով կերակրեց, բայց կենարար խօսքի վարդապետութեամբ (որը հոգու կերակուրն է՝ ըստ այն [խօսքի], թէ՝ «Մարդ միայն հացով չի ապրի, այլ՝ ամենայն խօսքով, որ դուրս է գալիս Աստուծոյ բերանից» [Բ Օրին. Ը 3]) մշտապէս էր կերակրում նրանց հոգիները՝ ժամանակին լինէր, թէ՝ տարաժամ: Այլեւ իմաստուն ծառայի՝ ծառայակիցներին ժամանակին կերակուր տալու առակով եւ կրկնապատիկ քանքարներ շահողի եւ զլացողի օրինակով նոյնը ցոյց տուեց, թէ պէտք է տալ ամէն մէկի, ով խնդրի [տե՛ս Մատթ. ԻԴ 45–51, ԻԵ 14–30]:

Բ

Իսկ ինձ, ո՛վ սիրելի իմ հոգու, հարկաւոր է քեզ տալ երկու եւ ոչ՝ մէկ պատճառով: Առաջինը՝ ըստ Տիրոջ վերը ցոյց տրուած հրամանի, որ օրինադրում է տալ ամէն խնդրողի, եւ երկրորդ՝ ըստ բնական արիւնակցական մերձաւորութեան եւ ընտանութեան: Սրանում ծուլանալիս երկնչում եմ մարգարէի եւ առաքեալի մեծաբարբառ փողերի ձայնից: Մէկինը՝ որ ասում է «Ընտանիքիդ զաւակին չնուաստացնես»

[Եսայի ԾԸ 7]՝ անտեսելով, եւ միւսինը՝ «Եթէ մէկը իւրայինների եւ մանաւանդ՝ ընտանիքի համար խնամք չի տանում, հաւատքն ուրացել է եւ աւելի չար է, քան անհաւատը» [Ա Տիմ. Ե 8]: Բայց դու զգո՛յշ եղիր՝ գործով փութալու ասածներիս կատարման մէջ՝ ըստ ժիր եւ հաւատարիմ ծառայի օրինակի, ով արթնութեամբ սպասում էր տիրոջ գալստեանը, «քանզի ոչ թէ օրէնքը լսողներն են, որ կարդարացուեն,– գրում է առաքեալը,– այլ՝ օրէնքը կատարողները» [Հռոմ. Բ 13]: Քանզի ինչպէս որ ես եմ չտալու դէպքում իբրեւ տէրունական [խօսքն] անտեսող դատապարտւում, նոյնպէս էլ դու գործով չհետեւելու դէպքում՝ իբրեւ քարոզուած [խօսքն անտեսող]: Քանզի Ով ասաց, որ տէրունական խօսքի արծաթը թաքցնողին հանեն արտաքին խաւարը, Նա նաեւ ասաց, որ սեղանաւորներին, [այսինքն]՝ մարդկանց լսելիքին, յանձնուածը լսողներից տոկոսով պիտի պահանջուի, եւ իրենց Տիրոջ կամքն իմացողները եւ չկատարողները պիտի զանկոծուեն [տե՛ս Ղուկ. ԺԲ 47]: Բայց Ով բոլոր բարիքների շտեմարանապետն է եւ կամենում է, որ ամէնքն ապրեն եւ ճշմարիտ գիտութեանը հասնեն, ըստ բարեսէր կամքի՝ թող տայ արժանապէս օգտուել Իր [բարիքներից] եւ, որպէս գիտութեան խօսքի հաւատարիմ տնտես, որ երկնքից իջած հաց է՝ հոգիների կերակուր, նաեւ թող սնուցի օրէնքով: Զեզ էլ [թող տայ] մտադիրութեամբ եւ բարոյ հաւանութեամբ ընդունել եւ, ըստ յոգնաբեղուն եւ պարարտ երկրի, պտուղ տալ՝ աննախանձ Սերմանողից կեանքի սերմերի չորրորդ մասն ընդունելով [տե՛ս Մատթ. ԺԳ 1–9]:

Գ

Եւ արդ, սկսենք, որտեղից արժան է սկսել՝ ճշմարիտ հաւատքի դաւանութիւնից, որը բոլոր բարիքների հիմքն ու արմատն է: Քանզի եւ Տէրն այս հիմք դրեց Իր Եկեղեցուն՝ ասելով առաջին դաւանող Պետրոսին, թէ՝ «Դու քո խոստովանութեամբ իբրեւ հաստատուն եւ անշարժ վէմ ես, եւ այդ վէմի վրայ պիտի շինեմ Իմ Եկեղեցին» [տե՛ս Մատթ. ԺԶ 18], այսինքն՝ համագոյ եւ զուգական Երրորդութեան բոլոր հաւատացեալները եւ ճշմարիտ խոստովանողները: Նաեւ՝ Եկեղեցին շինող Պօղոսն ասում է. «Շինուած առաքեալների եւ մարգարէների հիման վրայ» [Եփես. Բ 20] եւ թէ՝ «Իբրեւ իմաստուն ճարտարապետ՝ հիմքը դրեցի» [Ա Կորն. Գ 10], [այսինքն]՝ առ Սուրբ Երրորդութիւն հաւատքը, որի վրայ գեղեցկապէս կառուցւում է բոլոր առաքինութիւնների շինուածքը:

Դ

Եւ արդ, այ՛ս է ճշմարիտ հաւատքի դաւանութիւնը. հաւատալ Հայր Աստծուն՝ [որպէս] ճշմարիտ Էութիւն, կատարեալ Գոյ, անեղ, անսկիզբ, անժամանակ, անպատճառ, անիմանալի, անտեսանելի, անճառելի, անհաս, պարզ, անզգին, անվերջ, անսահման, աներբ, անուր, անբովանդակելի, անայլայլելի, անփոփոխ, գերաբուն, գերագոյ, գերալոյս, գերանճառ: Ո՛չ որեւէ մէկից է եղել եւ ո՛չ էլ՝ Ինքն Իրեն ստեղծել: Ոչինչ [չկայ] Նրանից առաջ, եւ ո՛չ՝ Նրա պէս երկրորդը, այլ Ինքն է ամէն ինչի սկիզբն ու պատճառը՝ համագոյների* ծննդեամբ եւ բխմամբ, եւ արարածների՝ արարչութեամբ:

Ե

Իսկ Նրա միածին Բանը եւ Ծնունդը խօսքից վեր է. Էութեան կերպարանք եւ ճառագայթ, կենդանի նկարագիր եւ կնիք, իմաստութիւն եւ զօրութիւն, Հօր բոլոր աստուածավայելուչ կոչումներն էապէս ունեցող՝ որպէս նոյնագոյ բնութիւն: Աստուած՝ Աստծուց, անեղ՝ անեղից, անժամանակ՝ անժամանակից, կեանք՝ կեանքից, լոյս՝ լոյսից: Հօրից կրտսեր չէ, թէեւ ծնունդ է, այլ որքան Հայրը հայր է, [այդքան] էլ Որդին՝ որդի: Քանի որ եթէ հայր է, ապա որդու հայր է եւ, որդի չունենալով, հայրութիւն ունենալ չի կարող, նոյնպէս էլ չի լինում որդի առանց հօր, այլ երկուսի էլ յատկութիւնները միմեանցով են ճանաչւում:

Զ

Եւ Սուրբ Հոգին՝ անճառաբար բխում Հօրից՝ ո՛չ Որդու պէս՝ ծննդեամբ, այլ՝ Էութիւնից ելողութեամբ, ինչպէս՝ «Ճշմարտութեան Հոգին, որ ելնում է Հօրից» [Յովհ. ԺԵ 26]. էակից՝ Հօրը եւ փառակից՝ Որդուն: Նոյն բնութեամբ՝ հաղորդ եւ զուգահաւասար համագոյների ամէն ինչին, ինչ որ ասուեց Հօր եւ Որդու անեղութեան եւ [միւս յատկութիւնների] մասին: Որովհետեւ ոչ մի առաւելութիւն եւ կամ նուազութիւն չի տեսնում պաշտելի Երրորդութեան մէջ, այլ ամբողջովին զուգահաւասար միութիւն է, բացի անձերի յատկութիւններից եւ նրանց հետեւող բաներից: Այսինքն՝ Հայրը հայր է, Որդին՝ որդի, եւ Հոգին՝ հոգի: Եւ Հօրը չպէտք է համարել եւ կամ ասել Որդի եւ կամ Հոգի, եւ ոչ Որդուն՝

* համագոյ— էակից, ի նկատի ունի Որդուն եւ Սուրբ Հոգուն

Հայր կամ Հոգի, եւ ոչ Հոգուն՝ Հայր եւ կամ Որդի: Այլ Հայրը միշտ Հայր է, եւ Որդին՝ միշտ Որդի, եւ Հոգին՝ միշտ Հոգի Աստուծոյ:

Է

Եւ, ըստ անձերի, յատկութիւնները եւս տարբերւում են, որոնք են՝ ծնողութիւն, ծնելութիւն եւ ելողութիւն: Քանզի երբէք Հայրը ծնունդ կամ ելողութիւն չէ, եւ ոչ Որդին՝ ծնող կամ բխում, եւ ոչ Հոգին՝ ծնունդ կամ ծնող: Այլ ծնողութիւնը միշտ պատշաճ է Հօրը, ծնելութիւնը՝ Որդուն, եւ ելողութիւնը՝ Հոգուն, քանզի ինչպէս որ անձերն են անփոփոխելի, այդպէս էլ՝ յատկութիւնները: Հայրը համագոների ծննդեան եւ ելողութեան պատճառն ու սկիզբն է: Բայց եթէ մէկը, այս [իմանալով], կարծում է, թէ ժամանակական են, ապա [թո՛ղ իմանայ, որ] եւ՝ անպատճառ են, եւ՝ անսկիզբ՝ նոյնագոյ բնութեամբ՝ սկզբի եւ պատճառի հետ մշտնջենաբար լինելով: Եւ համաբուների* մէջ չկայ աւագութիւն եւ կրտսերութիւն, մեծութիւն եւ փոքրութիւն, անեղութիւն եւ եղելութիւն, այլ ամէն բանով, բացի անձնաւորութիւններից, հաւասար են եւ մի՝ բնութեամբ, աստուածութեամբ, անեղութեամբ, զօրութեամբ, մեծութեամբ, փառքով, պատուով, անհասութեամբ, անտեսանելիութեամբ, անճառելիութեամբ, իմաստութեամբ, բարութեամբ, արարչութեամբ եւ նախախնամութեամբ: Անեղ է եւ եղականներիս** իմանալիների եւ զգալիների ստեղծիչ, լոյս՝ եւ լոյսի արարիչ, կեանք՝ եւ ամէն ինչի կենդանարար, իմաստութիւն՝ եւ բոլորի իմաստարար, սուրբ՝ եւ սուրբերի սրբարար, բարի՝ եւ բարիքներ պարգեւաբաշխող, զօրաւոր՝ եւ զօրացածների զօրացուցիչ, կատարեալ՝ եւ կատարեալների կատարելագործ, լի՝ եւ կարօտեալներին լցնող, յաւիտենական՝ եւ յաւիտեանների*** գոյացուցիչ, անժամանակ՝ եւ սահմանիչ ժամանակների: Քանզի ժամանակներն ու յաւիտեանները եւ դրանց հետ՝ իմանալիներն ու զգալիները Նրանով եւ Նրա հրամանով եղան եւ կառավարւում են ու մնում անքակտելի հաստատութեան մէջ: Սա՛ է Երրորդութեան համաձայն դաւանութիւնը, որին պէտք է յարել նաեւ Բանի տնօրինութեան խորհուրդը:

* համաբուն— համագոյ, եակից
** եղական— արարած, ստեղծուած
*** յաւիտեան— 1. դար, դարաշրջան, 2. յաւիտենականութիւն պարունակող եակ, գոյաւոր. այսպէս օրինակ՝ յաւիտեաններ են հրեշտակները, մարդիկ եւն

Ը

Քանզի այս Երեք անբաւ Անձերից Մէկը՝ Հօրից նախքան յաւիտեաններն անժամանակ եւ անմարմին ծնուածը, Հոգուն էակիցն ու փառակիցը, համաբունների կամքով եւ հաճութեամբ իջնում է անճառելի փառքից եւ անբաւ բարձրութիւնից՝ նորոգելու եղծուած եւ ապականուած իւրաստեղծ պատկերը՝ կիրարկելով ոչ թէ ամենակարող իշխանութեան բնական զօրութիւնը, այլ՝ բազմապատիկ ամենահնար իմաստութիւնը: Հրեշտակապետի աւետումով բնակւում է ամեներջանիկ եւ փառաւորեալ Կոյս Մարիամի՝ Սուրբ Հոգով մաքրուած արգանդում եւ նոյն բնութիւնից հոգով եւ մտքով մարմին առնում: Կատարեալ մարդ եւ ճշմարիտ Աստուած՝ անշփոթ միութեամբ միաւորելով անխառնելիները՝ նոր եւ սքանչելի միութեամբ: Քանզի Աստուածութեան անյօդ եւ անմարմին էութեան պարզութիւնը չփոխուեց մարմնի նիւթական եւ յօդաւոր թանձրութեան, եւ մարմնի նիւթաւոր եւ թանձր բնութիւնը չդարձաւ անօսր եւ աննիւթ Աստուածութեան պարզութիւն, այլ երկու բնութիւնների յատկութիւններն էլ անշփոթ պահուեցին եւ անճառապէս միացան՝ ամէն միացումից եւ միութիւնից վեր: Մի Որդի եւ մի Տէր Յիսուս Քրիստոս՝ երկու կատարեալներից: Եւ հրակիր որովայնի քուրաներում Ամենարուեստն առաջին անապականութեամբ վերստին ձուլեց մեր բնութիւնը: Եւ քանի որ մարդկութիւնը ոչ թէ մասամբ էր մեղքերով ապականուած, այլ՝ ամբողջովին՝ հոգով, մարմնով եւ մտքով, ուստի Բանն ամբողջն առաւ եւ Իրեն միաւորեց, որպէսզի Իր անմեղութեամբ եւ անապականութեամբ մեղանչականն անմեղ դարձնի, ապականուածը՝ անապական:

Թ

Եւ մարդկային բոլոր կրքերը* կրեց բացի մեղքերից: Այսինքն՝ քաղցեց [Նա], որ կերակուր է տալիս բոլոր կենդանի [արարածներին]: Ծարաւեց՝ որ կենաց ջուրն է պարգեւում Իրեն հաւատացողներին: Յոգնեց՝ որ հանգիստն է աշխատաւորների: Ննջեց՝ որ անքուն պահում

* կիրք—աստուածաբանական եզր է, որով բնորոշում է մարդկային բնութեան այս կամ այն ներգործութեան, հարկատրութեան, փոփոխութեան ենթակայ լինելը

էր Իսրայէլը: Արտասուեց՝ որ սրբեց ամէն արտասուք բոլոր դէմքերից: Շրջեց աշխարհում երեսուն տարի՝ լռելով եւ Իր Աստուածութեան փառքը չյայտնելով մինչեւ կատարեալ հասակի լրումը: Այնուհետեւ մեղքերից ամենամաքրուածն ու մաքրութեանն անկարօտը գալիս է մկրտուելու: Մկրտւում է ամլորդուց՝ մեզ մաքրութեան շնորհները ցոյց տալով: Վկայւում է Հօրից սիրելի Որդի եւ Նրա կամքը կատարող՝ մեզ Հօրը որդեգրութեան բերելով: Յայտնի է դառնում նաեւ ազգակից Հոգուց՝ աղաւնակերպ իջմամբ, որը մեզ վրայ իջման պարգեւն է խորհրդանշում: Հոգու կողմից տարւում է անապատ, պահւում քառասուն օր եւ մեր [բնութեամբ] յաղթում փորձողին՝ մեզ պարգեւելով յաղթութեան շնորհն ու պսակը եւ ուսուցանելով մեզ պահքով յաղթել փորձողին: Եւ, գոռոզին տիրելով ու հսկային կապելով, այնուհետեւ մեծ զօրութեամբ վերադառնում է՝ առգրաւելու անիրաւ ստացուածքները, որոնք յափշտակուած էին պատրանքներով եւ ոչ՝ զօրութեամբ: Եւ դնում է նշանների ու վարդապետութեան սկիզբը, որով գերողից վերադարձնում է ողջ կողոպտուածը:

Ժ

Եւ այս ամէնը կատարելուց յետոյ, ըստ նախատեսների կանխաձայնութեան, կամաւորաբար չարչարանքների է գալիս: Քանզի թէպէտ եւ մարմնաւորմամբ եւ անմեղութեամբ մեր բնութիւնը սրբեց եւ արդարացրեց Հօր, հրեշտակների եւ այս աշխարհի կարծեցեալ իշխանի առջեւ (քանզի [չարն] իրենից ոչինչ Նրա մէջ չգտաւ), բայց նախագործ մեղքի պարտքը տակաւին կար մեր բնութեան վրայ: Ուստի պարարտ Եզն ու անմեղ Գառն Իր անմեղ մարմինը Հօր՝ արարածների հետ հաշտութեան նուէր եւ պատարագ է տալիս եւ վերցնում աշխարհի մեղքը: Եւ քանի որ աստուածային անչարչարելի եւ անմահ բնութեանն անհնար էր չարչարանք եւ մահ ընդունել, ուստի եւ չարչարելի մարմին առաւ, որպէսզի անչարչարը չարչարելի [մարմնով] չարչարուի, եւ անմահը մահկանացու [մարմնով] մեռնի եւ պատժապարտներիս ազատի յանցաւորութեան դատապարտութիւնից: Եւ ոչ թէ անձամբ այլ ոք էր, որ չարչարւում էր, եւ այլ ոք՝ որ չէր չարչարւում, եւ կամ ուրիշ էր, որ մեռնում էր, եւ ուրիշ՝ որ անմահ մնում, այլ միեւնոյն Անձը, լինելով չարչարանքներում, անչարչարելի էր, եւ մահուան մէջ՝ անմահ:

ԺԱ

Եւ ոչ՝ այսքանը միայն, այլեւ, անպարագիր եւ անվայրափակ բնութիւն լինելով, խաչի վրայ էր եւ Հօր աջ կողմում, գերեզմանում եւ քառակերպեան աթոռի վրայ, դժոխքի ստորին վայրերում եւ բոլոր բարձրութիւններից էլ վեր: Դպիրներից եւ փարիսեցիներից՝ թշնամանուած, եւ սերովբէներից՝ Հօր եւ Հոգու հետ սրբաբանուած: Մարմնով գերեզմանում էր, եւ հոգով՝ դժոխքի խաւարաբնակ արգելարաններում. Աստուածութիւնը զատուած չէր մարմնից եւ կամ հոգուց: Աստուածապէս եւ ինքնիշխանաբար յարութիւն առաւ նոյն մարմնով, որով չարչարուեց եւ մեռաւ: Երեւաց աշակերտներին եւ հաստատեց նրանց յարութեան հաւատքի մէջ՝ տեսանելի լինելով, շօշափմամբ, խօսելով եւ կերակուրներին մօտենալով: Համբարձուեց երկինք՝ դէպի հայրենի սեփական փառքը, եւ նստեց Հօր աջ կողմում, որից երբէք չհեռացաւ: Խոստացաւ միւս անգամ հայրենի փառքով գալ եւ դատողական իշխանութեամբ բոլորին առուգապէս յարութիւն տալ մշտնջենաւոր անմահութեան մէջ, որն այժմ յոյսով նորոգեց: Հակիրճ խօսքով այս է ճշմարիտ դաւանութեան հաւատքը՝ Հօր եւ Հոգու կամքով մեզ համար մարդացածի՝ միածին Բանի, փրկական տնօրինութեան:

ԺԲ

Բայց պէտք է իմանալ, որ թէպէտ հաւատքի անունը մէկ է, սակայն բազում մասերի է բաժանւում: Քանզի ողջ հաւատքի մեծ եւ առաջին հիմքն ու արմատը վերը գրուածն է, բայց սրանից յետոյ պէտք է հաւատալ Աստծուց մեզ տրուած բոլոր փրկական խորհուրդներին: Այսինքն՝ հաւատալ Քրիստոսի տիեզերական Եկեղեցուն՝ ովքեր ճշմարիտ եւ աներկբայ հաւատով խոստովանում են համագոյ եւ պաշտելի Երրորդութիւնը եւ Միածնի ներմարդութեան խորհուրդը, որ Աստուած է եւ կատարեալ մարդ, եւ անչարչարելին ու անմահը մեզ համար չարչարուել եւ մեռել է, յարութիւն առել, երկինք համբարձուել եւ Հօր աջ կողմում նստել, որ նաեւ գալու է միւս անգամ: Այն ամենքին, ովքեր այս խոստովանութիւնն ունեն, ըստ առաքելի՝ համարել որպէս Քրիստոսի մի Եկեղեցի եւ մի Գլխի՝ Քրիստոսի մարմին եւ անդամներ: Որեւէ եկեղեցական չնչին աւանդութեան պատճառով հայհոյական խօսքով չբաժանել եւ չմասնատել Քրիստոսի Մարմինը, որը խաչով եւ չարչարանքներով ստացաւ, փրկական Արեամբ գնեց, սրբեց եւ Իրեն

միացրեց:

ԺԳ

Հաւատալ նաեւ սուրբ Մկրտութեանը, թէ ամէն յանցանք մաքրում եւ մարմնի ախտաւոր ծնունդներին անախտաբար ծնում է որպէս երկնաւոր Հօր որդիներ, Միածնի եղբայրներ, Սուրբ Հոգուն հաղորդակիցներ եւ երկնքի արքայութեան ժառանգորդներ:

ԺԴ

Հաւատալ նաեւ Աստուծոյ Որդու Մարմնին եւ Արեանը, որ պատարագւում է սուրբ Մեղանի վրայ, թէ այն ճշմարտապէ՛ս Քրիստոսի Մարմինն ու Արիւնն է: Քանզի այն խօսքով, որ ասաց, թէ երկինքն ու երկիրը, որ անխափանելի են եւ հաստատուն, աւելի դիւրաւ կանցնեն, քան թէ Իր ասած խօսքն անկատար մնայ, նոյն խօսքով ասաց. «Այ՛ս է Իմ Մարմինն ու Արիւնը՝ մեղքերի քաւութեան եւ թողութեան համար» [Մատթ. ԻԶ 26–28, Մարկ. ԻԴ 22–25, Ղուկ. ԻԲ 14–20], որը տուեցի հաւատքով եւ սրբութեամբ ճաշակողներին: Ովքեր թէպէտ եւ մեղաւորներ են, սակայն, խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ սրբուելով, այս ճշմարիտ կենդանութեան ճաշակմամբ մերձենում են Ինձ եւ բնակւում Իմ մէջ, եւ Ես՝ նրանց մէջ: Որ թէեւ մարմնով մեռնում էլ են, սակայն, իրենց մէջ ճշմարիտ կեանքի սերմն ունենալով, հոգեւոր գարնանը, որը հասարակաց յարութիւնն է, բողբոջելով վերստին նորոգւում են ճշմարիտ եւ անմահ կենդանութեամբ՝ չստանալով հոգիների մահուան դառնաշունչ ճաշակումը յաւիտեա՛ն:

ԺԵ

Հաւատալ նաեւ մեղքերի ապաշխարութեանը, որը մարդասէր Աստուած, «Ով չի կամենում մեղաւորի մահը, այլ՝ նրա դառնալը չար ճանապարհից եւ ապրելը» [Եզեկ. ԼԳ 11], իբրեւ մեղքերի լուացման եւ սրբման օճառ տուեց Եկեղեցուն: Քանզի թէպէտ եւ Նրա առաջին կամքը մեր՝ սրբութեամբ եւ արդարութեամբ անմեղութեան մէջ մնալն է, սակայն, որպէս մեր բնութեան Արարիչ, գիտի մեր տկարութիւնը, թէ դիւրագայթ ենք ու սխալական եւ հանապազ ցած ենք ընկնում առաքինութեան բարձրութիւնից: Ունենք նաեւ յոգնահնար եւ բազմարուեստ, չարիք գործելու մէջ իմաստուն մարտակից թշնամի: Ուստի երկրորդ կամքով,

ինչպէս առաջինով, ըստ Իր բազում ողորմութեան, անոխակալ գթութեան եւ այնքան սիրոյ, որ բարերար Հայրն Իր Որդո՛ւն մահուան մատնեց մեզ համար, Միածինը՝ Իրե՛ն, եւ Սուրբ Հոգին՝ Փառակցի՛ն, տուեց նաեւ ապաշխարութիւն, որպէսզի Քրիստոսի անդամներից մեղքերով նեխածներն ու հատուածներն ապաշխարութեամբ առողջանան եւ, վերստին Գլխին պատկանելով, միանան: Ուստի պէտք է հաւատալ, որ զղջմամբ եւ խոստովանութեամբ, արտասուքով եւ ողորմութեամբ, պահքով եւ աղօթքով եւ սրանց նման բարեգործութիւններով, թէ որքան էլ որ մեծամեղ լինեն, թէ մեղքերը մրի պէս անլուանալի սեւ լինեն, իբրեւ ձիւն կսպիտակեն, եւ թէ արեան պէս կարմիր լինեն՝ ասես որդան կարմիրով անելանելի կերպով ներկուած, իբրեւ մաքուր բուրդ կսրբուեն:

ԺԶ

Հաւատալ նաեւ մեռելների յարութեանը եւ յաւիտենական դատաստանին: Սա է բոլոր բարեգործութիւնների սկիզբն ու արմատը, առանց որի անհնար է հաճոյ լինել Աստծուն: Քանզի եթէ մէկը յարութեան յոյսով հաստատուած չէ, ինչպէ՞ս է անձն առաքինութեան ճգնութիւններին յանձնում: Եւ եթէ դատաստան մտնելու ակնկալութիւն չունի, ե՞րբ է հեռու մնում մեղքերից: Քանզի եթէ, յարութեանը հաւատալով եւ դատաստանն ակնկալելով, օրըստօրէ շատացնում ենք չարիքները, ի՞նչ կգործէինք, եթէ չլինէր դատաստանի երկիւղը. իհա՛րկէ, համարձակօրէն ցոյց կտայինք մեղքերի բոլոր գարշութիւնները սպանութեամբ, զրկանքներով, անիրաւութեամբ, յափշտակութեամբ, պոռնկութեամբ, արուագիտութեամբ, հպարտութեամբ, նախանձով, ատելութեամբ եւ սրանց նման պէս–պէս ու բիւրապատիկ չարիքներով: Ուստի յոյժ կարեւոր է յարութեանն ու դատաստանին հաւատալը, քանզի, բերաններիս իբրեւ սանձեր ունենալով, չարի յարձակումները ետ կշպրտենք եւ առաքինութիւնների մէջ առաջ կընթանանք:

ԺԷ

Հաւատալ նաեւ այն բանին, որ ոչ միայն հոգիների յարութիւն եւ դատաստան է լինելու, ինչպէս ոմանց թուաց, այլեւ՝ մարմինների եւ մա՛նաւանդ՝ սրանց, քանզի հոգին անմահ է, եւ մահն էլ ոչ այլ ինչ է, եթէ ոչ՝ հոգու անջատումը մարմնից: Այդպէս եւ՝ յարութիւնը անլուծանելի միաւորութեամբ նրանց վերստին միմեանց կապելու համար է: Եւ ինչպէս այստեղ լաւ կամ վատթար վարքով միասին ապրեցին,

նմանապէս էլ այնժամ միասին կվայելեն կամ կտանջուեն: Եւ ոչ թէ, ըստ ոմանց երեւակայութեան, ուրիշ մարմին պէտք է յարութիւն առնի փոխանակ նրա, որ մեռաւ, այլ՝ նոյն վախճանուածը: Քանզի անիրաւ չէ Աստուած, որ մէկին միւսի փոխարէն պատժի եւ կամ պսակի, այլ, ըստ առաքեալի, «իւրաքանչիւր ոք ստանում է այն, ինչ գործել է առաջ իր մարմնով՝ լինի չար, թէ՝ բարի» [տե՛ս Բ Կորն. Ե 10]:

ԺԸ

Դարձեալ հաւատալ, թէ երկնաւոր արքայութիւնն ու յաւիտենական կեանքն ընդունելու են դրան արժանացածները: Քանզի այս է, որ թեթեւացնում է օրէնքի բեռը, քաղցրացնում պատուիրանի լուծը, դարձնում դժուարինը դիւրին, առապարը՝ հարթ ճանապարհ, եւ անձուկն ու նեղը՝ աւելի դիւրակոխ, քան լայնն ու ընդարձակը: Այս նոյն հաւատքն էր, որ զօրացաւ մարմնի բոլոր ընդդիմահարների դէմ, հուրն ընդոտնեց, սուրը բթացրեց, գազանների հետ մարտնչեց, կապանքները խզեց, զէնքերը խորտակեց, աղեղները փշրեց, քաղցն արհամարհեց, մերկութիւնը քամահրեց, բռնաւորներից չերկնչեց, մահուան դէմ խրոխտացաւ եւ իր վրայ ելած բոլոր ներհակ զօրութիւնները միանգամից կործանեց:

ԺԹ

Հաւատքի այս վայելչական կարգը կգտնես նաեւ Նիկիոյ սուրբ եւ տիեզերական Ժողովի ընդհանրական դաւանութեան մէջ, որն օրըստօրէ բազմազան լեզուներով սեփականացնում են հաւատացեալների դասերը՝ մեծերն ու փոքրերը: Քանզի համաբուն եւ պաշտելի Երրորդութիւնը եւ ներմարդութեան տնօրինութիւնը խոստովանելուց յետոյ աւելացնում են, թէ՝ «Հաւատում ենք նաեւ հետեւեալին՝ միայն ընդհանրական եւ առաքելական Եկեղեցուն, մի մկրտութեանը, ապաշխարութեանը, մեղքերի թողութեանը, մեռելների յարութեանը, հոգիների եւ մարմինների յաւիտենական դատաստանին, երկնքի արքայութեանն ու յաւիտենական կեանքին»: Սա՛ է առաքեալների եւ մարգարէների հիման վրայ շինուած հաւատքի լիակատար եւ անթերի խոստովանութիւնը:

Ի

Սակայն կատարեալ փրկութիւնն առանց առաքինութեան գործերի,

ինքնըստինքեան չի լինում, քանզի «Առանց գործերի հաւատքը մեռած է» [Յակ. Բ 26],– ասում է առաքեալը, ինչպէս եւ գործերը՝ առանց հաւատքի: Քանզի գրուած է, թէ դեւերը եւս հաւատում են: Եւ ոչ միայն հաւատում են, այլ նաեւ՝ սարսափում, բայց ոչինչ չեն շահում առանց գործերի: Այլ [նրանք], ովքեր պէտք է արքայական թագ պատրաստեն՝ երկնաւոր Թագաւորին ընծայելու, մանաւանդ որով իրենց հետ կպսակուի Գլուխը՝ Քրիստոս, ըստ Սողոմոնի՝ հաւատքի մաքուր ոսկով եւ առաքինութեան զանազան քարերով [այն] պէտք է պատրաստեն: Քանզի այս բանի գիտակ Պօղոսն էլ ասում է. «Ես, իբրեւ իմաստուն ճարտարապետ, հաւատքի վարդապետութիւնը հիմք դրեցի, բայց այլ է շինողը, եւ իւրաքանչիւր ոք զգոյշ պէտք է լինի, թէ ինչպէս շինի. քանզի եթէ մէկը հաւատքի հիմքի վրայ շինի ոսկով, արծաթով, թանկարժէք քարերով, փայտով, խոտով, եղէգով.» [տե՛ս Ա Կոր. Գ 10 եւն]: Դրանք գործերն են. ոսկին խոհական իմաստութիւնն է, արծաթը՝ բանական առաքինութիւնը, թանկարժէք քարերը՝ պէս–պէս ու զանազան բարեգործութիւնները: Իսկ փայտը, խոտն ու եղէգը չարագործութիւնն են ցոյց տալիս: Փայտով ցոյց է տալիս մեծագոյն ու գործով կատարուող մեղքերը, որոնք մարմնին են յատուկ, դիւրաշարժ եւ անհաստատ եղէգով՝ լեզուի միջոցով՝ յոգնաշարժ խօսքերով յանցանքները, եւ յոգնաբոյս խոտով՝ մտքի բազմապատիկ եւ բիւրակերպ շարժումների սխալները: Եւ աւելացնում է, թէ՝ «Իւրաքանչիւր գործ յայտնի է դառնալու, քանզի Դատաստանի Օրը ընտրութիւն է լինելու, քանի որ հրով է յայտնուելու Դատաւորը, եւ իւրաքանչիւր գործ, ինչպիսին էլ լինի, հուրն է փորձելու» [տե՛ս նոյնը]: Քանզի եթէ ոսկի է կամ արծաթ, հրին ոչ միայն կուլ չի գնայ, այլեւ է՛լ առաւել պարզուելով կպայծառանայ, եւ եթէ ժանգի չնչին խառնուրդ էլ ունէր, կսրբուի եւ ճառագայթաձեւ կփայլի: Իսկ եթէ փայտ է, խոտ կամ եղէգ, շուտով այրուելով կապականուի: Եւ որպէսզի չկարծեն, թէ կիզուող գործերի հետ գործողը եւս այրուելով ոչնչանալու է, աւելացնում է՝ թէ՝ նա ապրելու է: Եւ որպէսզի այնպէս չմնանաս, թէ ճշմարիտ կեանքում է [ապրելու], աւելացնում է՝ այլ որպէս թէ հրում՝ այն ցոյց տալով, թէ անմահ է եւ կիզելի. միշտ այրում է եւ չի մեռնում:

ԻԱ

Եւ արդ, այսպիսի գեղեցիկ, աստուածահաստատ եւ առաքելաշէն հիմքի վրայ, որը ոչ հողմից է շարժում, ոչ տեղումներից ընկնում եւ ոչ

գետերի վարարումից կործանում, որոնք ցոյց են տալիս զանազան փորձութիւնները, շինուածքն այնպիսի նիւթերով է պէտք կառուցել, որոնք, ընտրութեան հրին մերձենալով, պայծառանում են եւ ոչ թէ՝ ապականում. դրանք հոգեկան եւ մարմնական առաքինութիւններն են:

ԻԲ

Եւ քանզի բանական հոգին, լինելով իմանալի, վերիններին ազգակից եւ տիրականի պատկերը, ամէն ինչով մարմնից նախադաս է եւ պատուական, իրաւացի է նախ նրա մասերը զարդարել իրեն յատուկ ու բնական առաքինութիւններով: Եւ որովհետեւ հոգին արարչագործ հրամանով եւ կարգադրութեամբ եռամասնեայ է՝ ունի խօսք, ցասում եւ ցանկութիւն, որով ճշմարտապէս ըստ բնականի է շարժում, ոչնչով վերինների նմանութիւնից ետ չի մնում: Եւ սրանցից իւրաքանչիւրն ունի իրեն յատուկ առաքինութիւն: Բանականի առաքինութիւնը խոհականութիւնն է, ցասմնականինը՝ արիութիւնը, իսկ ցանկականինը՝ ողջախոհութիւնը: Խոհականի գործը խորհելն ու լաւը վատթարից ընտրելն է: Արիութեանը՝ խոհականի կողմից ընտրուածը քաջապէս եւ արիաբար կատարելը: Իսկ ողջախոհութեանը՝ ըստ ընտրութեան եւ կատարման՝ դէպի ատուածային սէրը բորբոքելը, որով իրենից նախադասներին սիրոյ ջերմութեամբ աւելի է զօրացնում [իրենց] բնական կարողութիւնների մէջ:

ԻԳ

Բայց պէտք է տեսնել նաեւ սրանց բարեձեւ կարգաւորութիւնը: Քանզի բանականը, որպէս միւսներից առաւել վեհ, առաջ է դասւում եւ իշխան ու հրամանատար է նրանց վրայ, քանզի նրա գործը խորհելը եւ, ըստ նոյնի, արժանին աւանդելն է երկուսին էլ՝ ցասմնականին եւ ցանկականին: Իսկ ցասմնականի գործը հաւանութեամբ եւ արիութեամբ հրամայուածներին հետեւելն է, նաեւ՝ սաստ ունենալը ցանկականի վրայ, որպէսզի բանականից իրեն աւանդուածը ճշմարիտ ցանկութեամբ ամբողջական եւ անարատ պահի Աստուծոյ եւ աստուածային պատուիրանների հանդէպ: Եւ բանականն ինքնիշխան է՝ չունենալով իր վրայ կարգակիցներից եւ ոչ մէկի իշխանութիւնը: Իսկ ցասմնականը կառավարում է բանականից եւ ինքն իշխում ցանկականի վրայ: Ցանկականն էլ կառավարում է ցասմնականից եւ ինքն ուրիշի վրայ չի իշխում:

ԻԴ

Այս է ցոյց տալիս նաեւ նրանց տեղակայումը մարմնի մէջ: Քանզի բանականը տեղակայուած է գլխում, խելապատակում եւ ուղեղում: Եւ ինչպէս որ գլուխը մարմնի անդամների մէջ, [որպէս] վեհ եւ առաջին, նախադաս լինելով, իբրեւ թագաւոր է, իշխան եւ հրամանատար ամբողջ մարմնի համար, այդպէս էլ խոհականը, արքունի աթոռն այդտեղ ունենալով, որպէս թագաւոր իշխում է ցածում գտնուողների՝ ցասմնականի եւ ցանկականի վրայ: Ցասմնականը տեղակայուած է գլխից ներքեւ՝ սրտում, կառավարում է իրենից բարձր կանգնած բանականից եւ ինքն էլ իշխում ցանկականի վրայ, որը նրանից ցած է գտնուում: Իսկ ցանկականը բնակւում է երիկամներում եւ ստորին որովայնում, ուստի եւ կառավարում է իրենից բարձր կանգնած ցասմնականից եւ ինքը չի իշխում ոչ մէկի վրայ, քանզի եւ չկայ նրանից ցածր որեւէ զօրութիւն, որ հնազանդուի նրան:

ԻԵ

Այս բարւոք կարգաւորութիւնը տեսնում է նաեւ յոյժ հրաշափառ եւ պատկառելի օրինակով: Քանզի Աստուած, ինքնիշխան եւ բոլոր ստեղծուածների վրայ թագաւոր լինելով, իշխում է բոլորի վրայ, ուստի եւ՝ մարդու վրայ, եւ Ինքն անիշխան է: Եւ մարդուն Իր պատկերով ստեղծեց եւ ասաց, որ իշխի Իր իշխանութեան ներքոյ [գտնուող] երեւելի արարածների վրայ: Իսկ զգալիները մարդու իշխանութեան տակ են եւ իրենք ոչ մէկի վրայ չեն իշխում:

ԻԶ

Արդ, որքան այս կարգաւորութիւնը, ըստ բնական սահմանի, վայելչապէս շտկում է մեզանում, ամէն ինչ բարեձեւ եւ ըստ առաքեալի կարգի կլինի, եւ տէրունական պատուիրանի հրամանը մեզանում անխափան կկատարուի: Քանզի խոհականն աստուածայինի մէջ միշտ կխոկայ՝ ըստ Սուրբ Գրքի. «Թո՛ղ այս խօսքերը լինեն քո սրտում եւ քո անձի մէջ, եւ կխօսես նրանցով տանը նստելիս, ճանապարհ գնալիս, ննջելիս եւ արթնանալիս» [տե՛ս Բ Օրին. Զ 6] եւ ըստ միւսի էլ՝ «Տիրոջ օրէնքի շուրջ կխորհի նա օր ու գիշեր» [Սաղ. Ա 2]: Եւ քանի որ ամէն գործ՝ լինի բարի, թէ՝ չար, նախ խորհում են եւ ապա՛ կատարում, եւ առանց խորհելու որեւէ բան մէկը չի գործում, ապա ուրեմն, ով բարւոք եւ ճիշտ

է խորհում, ըստ նոյնի էլ գործն է կատարում: Եւ երբ խոհականն իր իշխանութիւնը եւ գործն ամբողջական է պահում, իշխում է ցասմնականի վրայ եւ հրաման տալիս՝ [կատարելու] բոլոր առաքինութիւնների գործերը, եւ ցասմնականը, արիութեամբ եւ քաջութեամբ բոլորին հպատակուելով, բարւոք կատարում է: Նոյնպէս էլ ցասմնականը, ըստ բնականի, հնազանդւում է բանականին եւ իշխում ցանկականի վրայ: Իսկ ցանկականը, բնականը ճիշտ եւ ամբողջական պահելով, չի ապստամբում ցասմնականի՝ հրամանից, այլ, որպէս հլու ծառայ, հնազանդութեամբ կնտարում է բոլոր հրամանները՝ եղջիւրներ չբարձրացնելով որեւէ մէկի վրայ, որովհետեւ նրա իշխանութեան տակ որեւէ մէկը չկայ:

ԻԷ

Բանականն ունի մէկ այլ մաս եւս, որ կոչւում է արդարութիւն: Եւ սա բոլոր մասերի կառավարիչը, ուղղիչն ու դատաւորն է: Քանզի բանականը նրանով է, որպէս գործիքով, բոլորին ուղղում եւ իւրաքանչիւրին անսայթաք պահում իր բնական շարժումների մէջ: Եւ երբ այս այդպէս է լինում, այնուհետեւ է բանականը խոհական, ցասմնականը՝ արիական, եւ ցանկականը՝ ողջախոհական: Եւ սրանից յետոյ մարդու մէջ Տիրոջ կամքի եւ պատուիրանների կատարման խափանիչ եւ արգելիչ ոչինչ չկայ, ըստ որի՝ [Աստուած] զօրութիւն դրեց մեր մէջ եւ պահանջում է կատարումը: Քանզի բանականը ճշմարիտն ու օգտակարն է խորհում, արդարութիւնը բաժանում ստորականերին, եւ նրանք էլ անխափան կատարում են: Իսկ ցասմնականը խոհականի ձեռքին իբրեւ ընտանի գազան է, այսինքն՝ շուն: Վերջիններս երկու բնական շարժում ունեն. տէրերին եւ ընտանիքը սիրում են, շողոքորթում եւ քծնում, իսկ օտարներին եւ անընտելներին գազանային, վայրենի եւ պատառող բարք ու գործառնութիւն ցոյց տալիս: Նոյնպէս էլ ցասմնականը, երբ բնականը ճիշտ է պահում, երեւում է իբրեւ բանականի ամէն բարւոք խորհուրդ արիաբար սիրող, կատարող եւ ցանկացող: Իսկ հակառակ, ոչ ընտանի եւ օտար խորհուրդներին եւ գործերին մեծ ցասմամբ ընդդէմ է ելնում, քշում եւ կամ չարաչար պատառում՝ բնաւ թոյլ չտալով դաւել ընտանիներին:

ԻԸ

Նմանապէս էլ ցանկականը, արիականի վերակացութեամբ բնականօրէն

շարժուելով, լինում եւ անուանւում է ողջախոհութիւն եւ սէր՝ անշարժ լինելով ախտաւոր ցանկութիւնների եւ դիւրաշարժ՝ բոլոր բարիքների սիրոյ եւ բաղձանքի հանդէպ: Եւ արդարութեան սատարութեամբ ճշմարտապէս կարգաւորում է սիրոյ օրէնքը՝ առաջինն ու մեծն Աստծուն տալով՝ ըստ Նրա օրինադրութեան, որ ասում է. «Դիտի սիրես քո Տէր Աստծուն քո ամբողջ անձով, ամբողջ զօրութեամբ եւ մտքով» [տե՛ս Բ Օրին. Զ 5], եւ ոչ ոք Նրան չի փոխարինում էակների մէջ: Ինչպէս եւ սրանց տիրապէս ուղղիչ Դաւիթն է ասում. «Ի՞նչ ունեմ բովանդակ երկնքում եւ կամ Քեզանից այլեւս ի՞նչ խնդրեմ երկրից: Նուաղեցին իմ սիրտը եւ իմ մարմինն առ Աստուած սիրոյ պատճառով. Աստուած իմ սրտի, [իմ] բաժին յաւիտեան» [տե՛ս Սաղ. ՀԲ 25], ով ինչպէս ծարաւածն է ջուր փափագում, այնպէս տենչում էր Աստծուն դէմ–յանդիման լինել. նաեւ աւելացնում էր. «Դո՛ւ ես իմ յոյսն ու բաժինը Կենդանեաց Երկրում» [Սաղ. ՃԽԱ 5]: Իսկ զարմանալի Պօղոսն իր յոյժ հրաշափառ սիրոյ առաւելութիւնն է ցոյց տալիս, քանզի, բոլոր դժնդակների վրայ համարձակութեամբ խրոխտացած, ասում է. «Ո՞վ ինձ կհեռացնի Քրիստոսի սիրուց. նեղութի՞ւնը, անձկութի՞ւնը, թէ՞ հալածանքը» եւ այլն [տե՛ս Հռոմ. Ը 35], քանզի «Քեզ համար եմ,– ասում է,– մեռնում ամէն օր» [տե՛ս Հռոմ. Ը 36]: Եւ քանզի ոչ միայն դառն ու դժուարակիրներն են Աստուծոյ սիրուն հակառակ, այլ՝ առաւել եւս հեշտալիներն ու ախորժելիները, ուստի եւ դրանք է աւելացնում եւ ասում. «Հաստա՛տ գիտեմ, թէ ոչ մահը, ոչ կեանքը, ոչ իշխանութիւնները, ոչ խորութիւնները, ոչ բարձրութիւնները, ոչ հրեշտակները, ոչ պետերը, ոչ այս աշխարհը, ոչ գալիք արքայութիւնը, ոչ այլ որեւէ արարած՝ լինի երկնքում, թէ՝ երկրում, եւ սրանցում եղած բարիքները, որոնք մենք չգիտենք, չեն կարող ինձ հեռացնել Քրիստոսի սիրուց» [նոյն Ը 38]: Եւ ինչ որ ասում է, այս է. «Եթէ մէկն ամէն տեսակ չարչարանքներով եւ մահուամբ չարչարում է ինձ եւ սպանում Քրիստոսից բաժանելու համար, յօժարութեամբ ամէն չարչարանք եւ մահ յանձն եմ առնում, միայն թէ չբաժանուեմ Քրիստոսի սիրուց»: Եւ դարձեալ ասում է. «Եթէ մէկն ինձ տար երկինքն ու նրա բարիքները, ամբողջ երկիրն ու նրանում գտնուող ցանկալի բաները եւ ոչ միայն՝ այս, այլեւ եթէ լինէր սրանցից էլ մեծն ու բաղձալին, որոնց մասին մենք ոչ լսել ենք եւ ոչ էլ տեսել, եւ սրանցով կամենար ինձ հեռացնել Քրիստոսի սիրուց, բոլորն էլ կարհամարհէի եւ կանարգէի, իբրեւ աղբ անպիտան կհամարէի եւ Քրիստոսի սէրը կընտրէի ինձ համար»:

ԻԹ

Եւ սրան հետեւում է սիրոյ երկրորդ՝ մարդկանց հանդէպ ցոյց տրուող մասը, ինչպէս օրէնքում եւ Աւետարանում է կարգուած: Քանզի «Դիտի սիրես քո Տէր Աստծուն քո ամբողջ սրտով» ասելուց յետոյ ասում է, թէ՝ «Եւ քո ընկերոջը, ինչպէս քո անձը» եւ աւելացնում է, թէ՝ «Այս երկու պատուիրաններից են կախուած ամբողջ օրէնքը եւ մարգարէները» [Մատ. ԻԲ 40]: Եւ սակայն թէպէտ եւ երկուսն է ասում, որովհետեւ Աստուծոյ եւ ընկերոջ է բաժանում, սակայն մի է, քանզի սէր է: Եւ ամենայն ճշմարտութեան Աղբիւրը ճշմարիտ ասաց, թէ բոլոր պատուիրանները սիրոյ մէջ են բովանդակւում: Քանզի չկայ որեւէ պատուիրան, որ սիրուց դուրս գտնուի, երբ մէկը ճշմարիտ, անարատ եւ առանց կեղծաւորութեան սէր ունի Աստուծոյ եւ մարդկանց հանդէպ: Քանզի երբ մէկն ամբողջ սրտով սիրում է Աստծուն, Աստուծոյ սէրը խափանող ամէն բան արհամարհում է, այսինքն՝ փառք, մեծութիւն, պատիւ, իշխանութիւն եւ ունեցուածք, հօրը, մօրը, եղբայրներին, քոյրերին, կնոջը եւ որդիներին, նաեւ՝ իրեն: Ինչպէս եւ Ինքը՝ Տէրն, ասաց. «Եթէ մէկը գայ Ինձ մօտ եւ չատի հօրն ու մօրը եւն, չի կարող Իմ աշակերտը լինել» [տե՛ս Ղուկ. ԺԴ 26]: Եւ այստեղից է յայտնի, որ ովքեր ճշմարտապէս սիրեցին Աստծուն, ոչ թէ միայն երկրաւոր ինչքերն ու փառքն արհամարհեցին եւ ընտանիքն ու որդիներին անտեսեցին, այլեւ իրենց եւս պէս–պէս ու տեսակ–տեսակ չարչարանքներով մահուան մատնեցին: Իսկ ով ընկերոջ հանդէպ անկեղծ եւ անարատ սէր ունի, ոչ մի չար բան չի խորհում եւ գործում նրա նկատմամբ, այսինքն՝ չի ատում նրան եւ նախանձում, չի զրկում, անիրաւում, չի գողանում նրա ինչքերը, սպանել չի խորհում նրան, չի քամահրում, չի նենգում, չի ստում, չի մատնում, թէպէտ եւ բազում վնասների մեղաւոր ճանաչի նրան: Չի հպարտանում նրա հանդէպ, չի ամբարտաւանանում, չի բարկանում նրա վրայ, չի արհամարհում, չի թշնամանում, զրպարտում, քսութիւն անում, չարակնում, ոխ պահում, բամբասում, տրտնջում: Ոչ ինքն է նրա նկատմամբ չար գործում եւ ոչ էլ կամենում է, որ ուրիշ մէկն անի, այլ կամենում է նրան այն ամէնը, ինչ բարի է, եւ անում, ինչ կարողանում է: Կամենում է, որ նա առողջ լինի մարմնով, առաքինի՝ հոգով, եւ ամէն ինչով՝ յաջողակ՝ ըստ կենցաղի բերումների, նիւթապէս՝ հարուստ, պատուով՝ աւելացած, իշխանութեամբ՝ բարձրացած, ամենքից՝ փառաւորուած, տնով՝ յաջողուած: Կինն՝ ուզածի պէս, որդիները՝ բարեհամբոյր եւ խրատուած, մտքով՝ խոհական, խօսքով՝ կարգաւոր,

այնպէս, որ բոլորին սիրելի լինի: Եւ եթէ աղքատ է, ցանկանում է լրացնել կարօտութիւնը, եթէ տկար է, բժշկել է շտապում, եւ եթէ որեւէ տեղից հակառակորդ է վեր կենում, որչափ կարող է, ընդդիմակաց է լինում: Տրտմութեանը տրտմակից է լինում, խնդութեանը՝ խնդակից, եւ չկայ չար բան, որ երբեւէ նրան կամենայ, եւ ոչ՝ բարի, որ չկամենայ: Եւ ոչ՝ այսքանը միայն, այլեւ սէրը ծածկում է մեղքերի բազմութիւնը, ինչպէս եւ ատելութիւնը՝ առաքինութիւնները: Քանզի ինչպէս որ ատելին բարեգործութեան մէջ տեսնելիս թւում է, թէ [ամբողջը] չար է, այդպէս եւ սիրելին չարագործութեան մէջ տեսնելիս թւում է, թէ [ամբողջը] բարի է: Այս ամէնը եւ սրանցից էլ աւելին է թուարկում առաքեալը որպէս սիրոյ մասեր: Ահա տեսնո՞ւմ ես, որ այն ամէնն, ինչ Օրէնքը, Մարգարէները եւ Աւետարանական Վարդապետութիւնն են ուսուցանում, ամբողջովին սէրն է պարունակում իրենում: Ուրեմն յիրաւի էր նաեւ Քրիստոս ասում աշակերտներին. «Նրանով կճանաչեն ձեզ բոլորը, թէ Իմ աշակերտներն էք, երբ միմեանց սիրէք» [Յովհ. ԺԳ 35]: Չասաց, թէ՝ «Ինձ աշակերտելու նշանն այն է, երբ հիւանդներին էք բժշկում, կամ կոյրերին լուսաւորում, կամ անդամալոյծներին առողջացնում, կամ դեւերին հանում, կամ մեռելներին յարութիւն տալիս, կամ լեռները տեղաշարժում», այլ՝ «երբ սիրում էք միմեանց»: Քանզի գիտէր, թէ երբ ճշմարիտ սիրով սիրում են Աստծուն եւ ընկերոջը, դրա հետ նաեւ բոլոր պատուիրաններն են կատարւում:

Լ

Արդ, ինչպէս աւելի վերը ցոյց տուեցինք, երբ հոգու մասերն իրենց կարգաւորութիւնը ճիշտ են պահում, որպէսզի իշխանն իշխանութեան մէջ մնայ, եւ իշխեցեալները՝ հնազանդութեան, այս բոլոր բարեգործութիւններն անսխալ են կատարւում: Իսկ եթէ վայելչական կարգը եղծուելով ապականւում է, ծառաները տէրերի վրայ են ելնում, իշխանութիւնը յափշտակում, տէրերին ծառայեցնում, այսինքն՝ երբ ցանկականը ցասմնականի, եւ ցասմնականը խոհականի վրայ է տիրում, ամէն ինչ խառնուելով ամբողջովին կործանւում է, եւ իւրաքանչիւրը հակառակ ներգործութեան մէջ է շարժւում: Եւ, ըստ գործի, նաեւ անունների փոփոխում է լինում, եւ այնուհետեւ ոչ թէ խոհականութիւն, արիութիւն, ողջախոհութիւն, արդարութիւն են կոչւում, այլ՝ անմտութիւն, սրտմտութիւն, բոջախոհութիւն եւ անիրաւութիւն: Քանզի ոչ խոհականն է բարոքը խորհում, ոչ ցասմնականը՝ ընդդէմ չարի մաքառում, ոչ

ցանկականը՝ ողջախոհաբար Աստծուն եւ աստուածայինները ցանկանում, եւ ոչ էլ արդարութիւնն է լինում սրանց ուղղիչ, վերակացու եւ կառավար, այլ, բնականից անբնականի մէջ շարժուելով, չարաչար տապալմամբ կործանւում է՝ ըստ առակողի խօսքի, թէ՝ «Երեք բանից է երկիրը շարժւում. երբ ծառան է թագաւորում, երբ աղախինը տիկնոջ ժառանգորդն է դառնում, եւ երբ անմիտը հացով է յագենում» [տե՛ս Առակ. Լ. 21]: Քանզի ծառայ սրտմտութիւնը թագաւորեց իշխան խոհականի վրայ, աղախին բոջախոհութիւնը տիկին արիութեան ժառանգորդը դարձաւ, եւ անզգամ անմտութիւնը յագեցաւ նանրախոհութեան հացով, այսինքն՝ ստութեան հացով, որով եւ ամէն լաւ դէպի վատթար կողմ շարժուեց, քանզի մոլար իշխանն ախտերին ծառայ դառնալուց յետոյ ամէն տեսակ նանրութիւն է խորհում:

ԼԱ

Եւ սա է այս բնութեան քաղաքի անիրաւ դատաւորը, որի մասին Տէրն Աւետարանում ասում է, թէ՝ «Աստծուց չէր երկնչում եւ մարդկանցից չէր ամաչում» [Ղուկ. ԺԸ 2], որովհետեւ Տիրոջով չի խորհում եւ իրաւունքով չի դատում: Եւ ով բնութեամբ պէտք է Տիրոջ օրէնքով խորհէր, ամէն տեսակ չար խոկման մէջ է յածում եւ, քանզի բնութիւնը թեթեւ ու դիւրաշարժ է, շուտով բիւրապատիկ գարշ եւ աղտեղի ցանկութիւնների մէջ է խորհրդով ներքաշւում: Ինքը խորհրդի խոկմամբ զազրանում է եւ իր հետ զգայութիւններն է դէպի ախտակրութիւն շարժում: Եւ քանի որ բնութիւնն անտեսանելի է, մարդկանցից չի ամաչում, այլ թեւ շատերին է մօտ, [սակայն], ըստ չար յօժարութեան, շարժւում է ամէն տեսակ պղծութեան մէջ եւ անօրէնութեան գործը կատարում, թէպէտ եւ՝ ոչ մարմնով: Այսինքն՝ ում հանդէպ որ ատելութիւն ունէր, յօժարախորժ կամքով [նրան] պատուից զցեց, ինչքերը կողոպտեց, փառքից զրկեց, իշխանութիւնից տապալեց, անելանելի արգելքներ դրեց, կոճղերում պնդեց, կարեւոր [մասերը] հեռացրեց եւ անդամները հատեց: Եւ սրանով չբաւարարուեց, այլեւ չարաչար եւ դառն մահուան մատնեց: Եւ այս է, որ ասում է Որոտման Որդին, թէ՝ «Ամէն ոք, ով ատում է իր եղբօրը, մարդասպան է» [Ա Յովհ. Գ 15], քանզի թէպէտ եւ մարմնով [չսպանեց], սակայն կամքով եւ յօժարութեամբ սպանեց: Եւ այս կէս սպանութիւն է: Քանի որ մարդ հոգի է եւ մարմին, եւ հոգին մարմնից մեծ է, նա հոգով սպանեց, քանզի ինչպէս որ մարմինը գործով է սպանւում, այդպէս էլ հոգին՝ կամքով եւ յօժարութեամբ:

ԼԲ

Եւ եթէ ախտաւոր ցանկութեամբ սիրահարուել է մէկի, անարգել ընթանալով՝ շնանում է նրա հետ, թէպէտ եւ տոփելին բազմութեամբ է շրջապատուած, եւ, ըստ մարմնի, նրան [այդ] անիրականացնելի է: Քանզի ոչինչ նրան չի կասեցնում՝ ոչ տեղի հեռաւորութիւնը, ոչ ճանապարհի նեղութիւնը, ոչ լեռների բուրը, ոչ տօթագին դաշտը, ոչ լայնածաւալ ծովը, ոչ պարսպաւոր քաղաքը, ոչ ամրագոյն դղեակը, ոչ անպարտելի աշտարակը, ոչ փակուած դռները, ոչ պահապանների երկիւղը: Այլ, ամէն ինչ արհամարհելով, աներկիւղ համարձակութեամբ տոփելուն է հասնում եւ գարշ ցանկութիւնը կատարում: Եւ այս է, որ ասում է Տէրը, թէ՝ «Ամէն ոք, ով ցանկութեամբ է կնոջը նայում, արդէն իսկ սրտում շնացաւ նրա հետ» [տե՛ս Մատ. Ե 28], այսինքն՝ հոգում:

Նոյնպէս էլ եթէ կինն է տղամարդուն ցանկանում, նոյն օրինակով շնացաւ, քանզի տղամարդու համար բոլոր ասուածները նոյնն են նաեւ կնոջ համար: Եւ ինչպէս սպանութեան համար ասացինք, նմանապէս էլ սրա համար [ասենք], որ կէս շնութիւն է, քանզի շնութիւնը մարմնով չկատարեց, այլ՝ հոգով: Սրանց պէս իմացի՛ր նաեւ ամէն տեսակ մեղքի նկատմամբ դիւրաշարժ եւ դիւրակատար մտաւոր շարժումները: Եւ քանի որ անտեսանելի լինելու պատճառով մարդկանցից չի ամաչում, այդպէս էլ հեշտախտութեան եւ ցանկութեամբ յիմարացած լինելու պատճառով Աստծո՛ւց չի երկնչում: Եւ բոլոր մեղքերի պատճառը խոհականի մոլորութիւնն ու անընտրող յիմարութիւնն է: Եւ երբ նա, որ միւսների վրայ իշխան էր եւ ուղղիչ, ծառայական ախտերով այսպէս կաշկանդւում է, միւսները սրա մոլար ընտրողութեանն են հետեւում, քանզի ամենայն ինչ՝ թէ՛ բարի եւ թէ՛ չար, նախ մտածւում է եւ ապա՛ իրագործւում:

ԼԳ

Իսկ ցասմնական զօրութիւնը յեղաշրջուել եւ մէկից փոխարկուել է մէկ ուրիշի: Թէպէտ ժամանակին արիանում էր ընդդէմ օտարների, այսինքն՝ բանսարկուի եւ նրա չար արկածների, այժմ զինւում է ընդդէմ ընտանիների, որոնք ամէն տեսակ բարեգործութիւններն են: Եւ մանաւանդ, սրտմտութիւնը համազգիների եւ եղբայրների կողմն ուղղած, գազանաբար յարձակւում է: Քանզի մարդկանց սրտմտութիւնն օձի նմանութիւնն ունի, այսինքն՝ սատանայի, իժի եւ քարբի, [այսինքն]՝ նրա դեւերի: Քանի որ խցել են իրենց ականջները ընդդէմ ճարտար

թովիչների՝ մարգարէների, առաքեալների եւ Եկեղեցու վարդապետների, եւ չեն կամենում իմաստուն բժիշկներից ապաշխարութեան դեղը ստանալ եւ ախտից առողջանալ: Եւ այդպիսին չի կարող փոքր–ինչ թշնամանքների իսկ համբերել, այլ երբ պատահում է, որ որեւէ մէկից հակառակութեան կամ արհամարհութեան ու դարովանքների կարծիք է ստանում, փութանակի մեծ բարկութեամբ ընդդէմ է ելնում, աղաղակում, թշնամանում, նախատում, հայհոյում, անարգում, խելայեղի պէս չի իմանում՝ ինչ է խօսում: Մոլար մտքի ծնած ամէն անարգական խօսք, իբրեւ արիւնարբու գազանի ձագ, սրտի արգելարանից լեզուով դուրս է հանում, մինչեւ որ յանդուգն յարձակումից խօսքի հետ նաեւ թոյներ են դուրս ժայթքում: Այլեւ ձեռքերն ու ոտքերն է անհանճարաբար շարժում հարուածելու համար, եւ շատ անգամ էլ պատահում է նաեւ՝ սպանութեան համար: Ամէն ինչով դիւահարներին է նմանւում, նոյնիսկ՝ աւելի չար, քան դիւահարները. որքան նրանք ակամայ են տաքանում ախտի մէջ, այնքան սրանք՝ կամովի: Եւ ում հանդէպ, որ թշնամութիւն ունեն, ատում են մինչեւ վերջ, անլուծանելի ոխ ու մախանք են պահում, բամբասում են, նենգութեամբ դարանակալ լինում, խօսքով եւ գործով որոգայթներ պատրաստում՝ գցելու փառքից, պանուից, իշխանութիւնից, հարստութիւնից: Եւ ոչինչ այնքան ողձալի չէ նրանց, որքան նախանձելիին թշուառութեան մէջ տեսնելը, եւ ոչինչ այնքան դժնդակ չէ, որքան որեւէ բանով բարեկեցիկ տեսնելը: Ոչ այնքան իրենց թշուառութեամբ են տխրում, որքան նրանց բարեկեցիկութեամբ: Որքան հնարաւոր է, բոլորին թշնամութեան են հրահրում նրանց հետ եւ կամենում, որ ամենքից ատելի լինեն: Այսքան եւ սրանցից էլ աւելի են անկարգաբար սրտմտածների ատելութիւնն ու մախանքը:

ԼԴ

Իսկ ցանկականը, որ գեղեցիկ ողջախոհութիւնից եւ Աստուծոյ եւ ընկերների հանդէպ սիրուց խոտորուեց, ցնորուած շրջում է ամէն տեսակ նիւթական բաղձանքների մէջ: Քանզի, բնական եւ ողջախոհ սիրուց ընկած, գարշ ցանկութիւններով ներքաշւում է վաւաշոտ տռփանքների մէջ: Եւ ո՛չ՝ սոսկ ցանկութեամբ, այլեւ՝ կորստական գործի կատարմամբ, ո՛չ՝ [սոսկ] բնականներին յատուկ, այլեւ՝ անբնականներին: Ըստ այն խօսքի, որ առաքեալն է ասում. «Թողած էգերի հանդէպ բնական պէտքերը՝ իրենց ցանկութեամբ միմեանց հետ բորբոքուեցին. արուներն արուների հետ խայտառակութիւն էին գործում եւ փոխարէնն

իրենց անձերի մէջ էին ընդունում իրենց մոլորութեան վարձը» [Հռոմ. Ա 27], այսինքն՝ հրաժին ամպերով նորօրէն անձրեւուած հրի եւ երկնատեղած ծծմբի կիզումը՝ ըստ նորագիւտ ցանկութեան հրի՝ նմանութեամբ յաւիտենական եւ մշտավառ բոցի: Եւ ոչ միայն արուներին է ամբաստանում, այլեւ էգերն էլ, ասում է, բնական պէտքերն անբնական պէտքերով փոխարինեցին:

ԼԵ

Էլ չեմ խօսում նաեւ սրանցից էլ դժնդակ, անբնական եւ բնութիւնից առաւել հեռու, անասնայինի եւ գազանայինի մէջ խոտորուող զազրագործութիւնների մասին, որ իրենք իսկ՝ անասուններն ու գազանները, թէպէտ եւ անկապ ու արձակ բնութիւններ են, սահմանադրութեամբ օրէնքի տակ չեն եւ նրանց վրայ պատուհասի եւ կամ տանջանքի սպառնալիք չկայ, սակայն բնական օրէնքով, որը ստեղծման ժամանակ դրուեց՝ բնութիւններին հետեւելով, իրենց խառնուելու ժամանակ կենդանիների իւրաքանչիւր տեսակ ընտանի ազգակիցների սահմանից դուրս երբէք չի ելնում: Քանզի ձին արջառին, եւ կամ արջառը ոչխարին, եւ կամ ուրիշներ այլ օտար տեսակների [չեն խառնւում], այլ կենդանիների իւրաքանչիւր տեսակ դէպի իր ցեղն է գնում: Եւ այն էլ՝ ո՛չ անչափօրէն, այլ ըստ սահմանուած ժամանակի, արարչադիր հրամանով միայն ծննդագործութեանն են ծառայում, որ ասաց. «Աճէ՛ք եւ բազմացէ՛ք եւ երկիրը լցրէ՛ք» [ԾՆՆ. Ա 28]: Եւ այն էլ՝ խօսք եւ իմաստութիւն չունեն, որ խորհրդով եւ ընտրութեամբ վատթարներից խոտորուեն, այլ միայն բնական օրէնքներին են հետեւում: Իսկ խօսքով եւ իմաստութեամբ պատուած մարդիկ, որոնց սրանցից մէկն իսկ բաւական էր՝ արդարագործութեան չափ ու սահմանի մէջ պահելու, ամէն ինչ զանց առած, գազաններից եւ անասուններից էլ աւելի անմիտ եւ զազրագործ են երեւում: Եւ այլ գարշ ու աւելի աղտեղի արարքների մասին, որոնք գործւում են այդպիսի անմիտների մէջ, լռում եմ, որոնք եւ՛ գիտեմ, եւ՛ ականջներիս են հասել, սակայն չեմ կամենում զազրացնել խօսքերը, որպէսզի չլինի թէ ողջախոհ մէկը լսելով ձանձրանայ, մանաւանդ՝ իմացողներին եմ թողնում, քանզի այժմ այսպիսի բաներում բոլորն են քաջահմուտ:

ԼԶ

Արդ, ճշմարիտ ցանկութիւնից եւ Աստուծոյ եւ բոլոր աստուածայինների

հանդէպ սիրուց մոլորուածներն ասես պարանով կապւում են բոլոր ապականացու եւ ցնդելի նիւթական իրերի սիրուն եւ բաղձանքին՝ փոխանակելով ճշմարիտ կեանքի սէրն այս սնոտի իրերի սիրով, անապականը՝ ապականացուի, անփոփոխելին՝ փոփոխելիների եւ երկնաւորը՝ երկրաւորների: Քանզի քաղցրանում են նրանց այս անցաւոր [կեանքի] մեծութիւնը, փառքը, պատիւը, իշխանութիւնը, հարստութիւնը, որովայնամոլութիւնը, արբեցութիւնը, զրկանքը, ագահութիւնը, անիրաւութիւնը, յափշտակութիւնը եւ այլ ամէն սնոտի բաների ցնորքները:

ԼԷ

Իսկ արդարութիւնը դառնում է անիրաւութիւն: Եւ որ ժամանակին դէպի լաւագոյնները էր առաջնորդում եւ կարգաւորում իր ենթակայութեան տակ եղած մասերը, այժմ հակառակորդի տնօրէնն ու առաջնորդն է դառնում: Բարիքների այսքան եւ այսպիսի անկարգութիւնը եւ չարիքների՝ հոգու մասերում կարգաւորուելը բնականի խոտորումից եւ անբնականին հետեւելուց են լինում: Ուստի բազում զգուշութեամբ եւ արթնութեամբ պէտք է ամէն ոք իրեն հսկի, որպէսզի իր բանական հոգին, որն Աստուծոյ պատկերն է, սեփական առաքինութիւններով զարդարի, որով կփայլի նախկին լուսատիպ կերպարանքով, եւ նախատիպի նմանութիւնն իր մէջ հրաշազարդապէս կպատկերուի, որով անվայրափակ Էութեան տաճարն ու բնակարանը կլինի՝ ըստ [Տիրոջ] խօսքի. «Ես եւ Հայրը կգանք եւ նրա մօտ կօթեւանենք» [Յովհ. ԺԴ 23]:

ԼԸ

Արդ, մինչ այսպէս գեղեցկայարմար պատշաճաւորութեամբ դասակարգեցինք հոգեւոր առաքինութիւնները, պէտք է, որ դրանց հետեւեն նաեւ մարմնական բարեգործութիւնները, որպէսզի, ըստ առաքելի, «Աստուծոյ մարդն ամէն ինչով կատարեալ լինի» [Բ Տիմ. Գ 17] եւ ոչ՝ որեւէ բանով թերի: Քանզի ինչպէս որ հոգին [իր] մասերով է զարդարւում, այդպէս էլ մարմինը զգայարաններով է պայծառանում: Եւ զգայութիւնները հինգն են: Դրանք են՝ տեսանելիք, լսելիք, հոտոտելիք, ճաշակելիք, շօշափելիք: Եւ նախ պէտք է յայտնել, թէ ի՞նչ է զգայութիւնը, եւ ապա՛ դրանք ընտանի գործառնութիւններով զարդարել:

ԼԹ

Զգայութիւն է ասւում այն, որ, ըստ իր ներգործութեան, ցանկացած ազդեցութիւն, արտաքուստ ընդունելով, զգում է եւ ճանաչում: Ինչպէս [օրինակ]՝ աչքը, լոյսի ծագումն ընդունելով, զգում, ճանաչում եւ լուսաւորւում է եւ նրանով տեսած ամէն բան զգում ու ճանաչում, թէ ինչ է: Եւ ունկը, ձայների հնչումն ընդունելով, զգում է, թէ բացականչումն ումից է: Եւ հոտոտելիքը, զանազան հոտերի ազդեցութիւններն առնելով, զգում է, իմանում եւ դրանք միմեանցից տրոհում: Եւ ճաշակելիքը, քաղցր եւ դառը, իւղոտ եւ կծու պէս-պէս կերակուրների եւ ըմպելիքների համերն իր մէջ ընդունելով, զգում է իւրաքանչիւր համի ազդեցութիւնը: Եւ շօշափելիքը, տեսակ-տեսակ զանազան նիւթերը շօշափելով, զգում է եւ միմեանցից զատորոշում խոշորներն ու ողորկները, կարծրերն ու փափուկները: Արդ, այս պատճառով են զգայութիւններ ասւում:

Խ

Եւ սրանք որպէս մեր մարմնի տան դռներն են՝ լաւ եւ կամ վատթար ամէն ինչի դրսից ներս եւ ներսից դուրս գալու՝ ըստ մարգարէի, որ ասում է, թէ մահն այս պատուհանով [այսինքն՝ զգայարանով] մտաւ [Երեմ. Թ 21]: Եւ ինչպէս որ դռնով ենք տուն բերում ամէն արժէքաւոր ու պիտանի գոյք եւ դարձեալ նոյնով դուրս հանում տան համար անպիտան որեւէ իր, այնպէս էլ բոլոր հոգեւոր հարստութիւնները, որոնցով, ըստ համազգի հոգեղէնների, անկարօտ ճոխանում է բանական հոգին, զգայարանների դռներով՝ իւրաքանչիւր ներգործութեան հետ մեր ներսն ընդունենք: Եւ երկրաւոր ցանկութիւնների եւ ստորին սիրոյ աղբը, որ որոմնացան թշնամու սերմերն է, իբրեւ վնասակար եւ մահացու բաներ՝ դարձեալ նոյն տեղով դուրս հանենք: Եւ ինչպէս որ միշտ չէ, որ փակ ենք պահում տան դռները, որովհետեւ եթէ յար փակուած են մնում, օգտակար հարստութիւնները չենք հաւաքում, նաեւ մեր բնակութեան համար [տունն] անպիտան է դառնում, ոչ էլ հանապազ բաց ենք թողնում, որպէսզի այդպէս էլ թշնամիները, խարդախ գողերն ու աւազակները մտնելով մեզ կողոպտեան չմատնեն եւ ունեցուածքը յափշտակեն, այլ յարմար ժամանակի, ըստ պատշաճի, բացում ենք եւ փակում՝ համաձայն իմաստունի խրատի, որ երկնքի տակ եղող ամէն ինչի ժամ ու ժամանակ

է սահմանում: Այսպիսով, մեր զգայարանների դռները հանապազ պէտք չէ փակել, քանզի այլեւս ինչի՞ համար դրուեցին մեր բնութեան մէջ, եթէ պէտք է միշտ փակ մնան: Քանզի աչքի գործը տեսնելն է, ունկինը՝ լսելը, նմանապէս էլ՝ միւսներինը՝ ըստ իրենց նշանակութեան: Եւ ահա անպիտան են, եթէ բնական գործառնութիւնը չեն կատարում, այլ պէտք է լաւագոյնների հաւաքման համար պատշաճ ժամանակ բանալ եւ այլ ժամանակ, երբ վնասակարներն են մուտք գործում, փակել:

ԽԱ

Եւ ասելիքս մ՛այս է: Պէտք է աչքը փակել ընդդէմ արատաւոր նայուածքների եւ բոչախոհ ցանկութեամբ ու վաւաշոտ տոփանքով չգննել էգի կամ արուի արտաքինը, որովհետեւ դրանից [մարդն], ասես կորովաձիգ աղեղնաւորից, հոգու վրայ նետերի կարեվէր խոցող հարուածներ է ստանում, որոնցով մեռնում է անմահը: Քանզի ախտաւոր նայուածքով պղծութեան գործ է ցուցադրում եւ իսկոյն շնանում նրա հետ՝ ըստ Տիրոջ խօսքի, որ ասում է «Ով կնոջը ցանկութեամբ է նայում, իսկոյն սրտում շնանում է նրա հետ» [տե՛ս Մատթ. Ե 28]: Եւ ամէն շուն եւ պոռնիկ, ըստ առաքեալի, մաս ու ժառանգութիւն չունի Աստուծոյ արքայութեան մէջ [տե՛ս Ա Կորն. Զ 10]: Իբրեւ յիշատակութեան անարժան բաներ՝ էլ չեմ խօսում բնութիւնից հեռու, անասնային եւ գազանային պղծութիւնների մասին:

ԽԲ

Դարձեալ աչքը պէտք է փակել ընդդէմ ընկերոջ հանդէպ չարակնութեան: Երբ չարակնը մէկի բարեկեցիկ է տեսնում՝ ըստ կեանքի որեւէ յաջողութիւնների՝ տան, որդիների, ստացուածքների, իշխանութեան, պատուի, փառքի, բարեհամբաւ անուան, սիրոյ եւ բոլորի մօտ ընդունելութեան, ասես սայրասուր սրով խոցւում է, նախանձում, մախանք պահում եւ գերադասում է մեծամեծ ու դժնդակ տոյժեր կրել, քան թէ նրան այդպիսի փառաւորութեամբ տեսնել: Շատերն էլ մահուան դաւ են գործում նրանց հանդէպ, որոնց չարակնութեամբ են նայում: Եւ սրա բազում ապացոյցներն ունենք Սուրբ Գրքից, եւ մանաւանդ՝ [այն], որ մեղքերի եւ մահուան սկիզբը սրանո՛վ մտաւ աշխարհ: Քանզի չարակն բանսարկուն, նախաստեղծի գերուսակ փառքը տեսնելը հանդուրժել չկարողանալով, խաբէութեան երապուրանքներով մօտեցաւ եւ մահուան ճաշակումը նուիրեց նրան: Եւ Կայէնի մարդասպանութիւնը

ոչ այլ ինչ էր, ե՛թէ ոչ՝ [այն], որ չկարողացաւ նայել Հաբէլի՝ Աստծուն հաճելի պատարագներին: Իսկ Յովսէփի եղբայրները, բաղձալի երազատեսութեանը նախանձելով, կամեցան սպանել նրան եւ ապա այլազգիներին վաճառեցին, ինչպէս որ Տիրոջը չարչարանքների եւ մահուան մատնեցին: Նաեւ Դաւթին սպանելու նպատակով Սաուղի բազմահնար մեքենայութիւններն այլեւս ինչի՞ էին, եթէ ոչ՝ [նրանից], որ ժողովրդի աչքին սիրուած եւ պատուած էր նրան տեսնում եւ պարողներից լսում, թէ Դաւիթը բիւրաւորների կոտորեց [տե՛ս Ա Թագ. ԺԸ 7]: Իսկ փարիսեցիների եւ դպիրների խաչ կանգնեցնելն ու փրկութեան Առաջնորդին, որ եկել էր նրանց բարձրացնելու եւ փառաւորելու, փայտին գամելն այլեւս ի՞նչ էր, եթէ ոչ Կենարարի բիւրապատիկ սքանչելի գործերը, լուսաւոր վարդապետութիւնը եւ ժողովրդից Նրա փառքն ու պատիւը հանդուրժել չկարողանալը: Քանզի թէպէտ եւ Նա եկել էր այն նպատակով, որ մեռնի եւ Իր մահուամբ վերացնի մարդկային ցեղի մահուան դատապարտութիւնը, սակայն նրանք, նախանձութիւնից չարակնութեամբ հեղձուելով, խաչեցին Նրան: Արդ, ընդդէմ բոլոր այսպիսի չարակնութիւնների է պէտք աչքը փակել, որպէսզի հոգիների կուրացուցիչ եւ մահացուցիչ տեսութիւնը ներս չթափանցի:

ԽԳ

Իսկ ընդդէմ լաւի եւ օգտակարի պէտք է յօժարութեամբ բանալ եւ բոլոր ախտերի բիծը, որ խափանում է գեղեցկագործ տեսութիւնը, մաքրել, որպէսզի [մարդը] կարողանայ յստակ նայուածքներով նայել եւ տեսնել Աստուծոյ սքանչելի գործերը, որոնցով էլ վայելչապէս հասնում է Արարչի գիտութեանը՝ ըստ առաքեալի. «Աստուծոյ աներեւոյթ [յատկութիւններն] աշխարհի սկզբից,– ասում է,– արարածների մէջ են իմանալի կերպով տեսնւում» [տե՛ս Հռոմ. Ա 20], այսինքն՝ Նրա մշտնջենաւորութիւնը, զօրութիւնը եւ Աստուածութիւնը: Եւ արդ, Դաւիթն ասում է. «Երկինքը պատմում է Աստուծոյ փառքը» [Սաղմ. ԺԸ 1]: Նա նաեւ ջերմագին տենչանքով աչքերին լուսաւորութիւն էր աղաչում՝ տեսնելու համար այսպիսի սքանչելիքներ. «Բա՛ց,– ասում է,– իմ աչքերը, եւ կտեսնեմ Քո օրէնքի սքանչելիքները» [Սաղմ. ՃԺԸ 18] եւ թէ՝ «Լո՛յս տուր, Տէ՛ր, իմ աչքերին, որ չքնեմ մահուան քնով» [Սաղմ. ԺԲ 4] եւ «Դարձրո՛ւ իմ աչքերը նանրութիւնից» [Սաղմ. ՃԺԸ 37]: Որից յետոյ համարձակութեամբ եւ պանծանքով ասում էր. «Իմ աչքերն ամէն ժամ

Տիրոջն են ուղղուած» [Սաղմ. ԻԴ 12] եւ «Սկզբում տեսնում էի Տիրոջն իմ առջեւ ամէն ժամ, քանզի իմ աջ կողմում էր, որ չսասանուեմ» [Սաղմ. ԺԵ 8], այսինքն՝ մտքի աչքերով հանապազ Աստծուն ինձ մերձ եւ աջ կողմում կանգնած էի տեսնում եւ Նրան տեսնելիս, երկիւղելով եւ պատկառելով, դողում մեղքերից: Սա ոչ միայն Դաւթի հետ է այսպէս պատահում, այլեւ՝ ամէն մէկի, քանզի երբ հաւատում է, թէ Աստուած իրեն մերձ է եւ տեսնում է, ինչպէ՞ս կարող է մեղանչել: Ինչպէս եւ Ղուտման Ղուդին է ասում. «Ամէն ոք, ով Աստուծոյ մէջ է հաստատուած, չի մեղանչում» [տե՛ս Ա Յովհ. Գ 6]: Քանզի երբ մարդ որեւէ մէկի մերձ է եւ տեսնում է, որեւէ չարիք չի գործում, այսինքն՝ չի շնանում, գողանում, սպանում եւ այլ նման [արարքներ] չի գործում, որչա՞փ առաւել եւս դադարում է ամէն տեսակ մեղքեր եւ չար գործեր գործել, երբ հաւատում է, թէ ամենքի Արարիչը, Դատաւորը, Վրէժխնդիրը, ըստ գործերի Հատուցողն իրեն մերձ է եւ տեսնում է: Եւ այս գիտենալով է Դաւիթն ասում. «Իմ աչքերն ամէն ժամ Տիրոջն են ուղղուած»: Եւ Ինքը՝ Աստուած, ասում էր մարգարէի միջոցով. «Մերձաւոր եւ ոչ հեռաւոր Աստուած եմ Ես» [տե՛ս Երեմ. ԻԳ 23], Որին եւ նախանձաւոր Հեղիասը միշտ իր առջեւ էր համարում:

ԽԴ

Եւ [Աստուած] ոչ միայն մարմնա՛կան գործերն է տեսնում, այլեւ՝ մտաւոր շարժումները՝ ըստ Դաւթի. «Որ սրտերն ու երիկամները քննող Աստուած ես» [Սաղմ. Է 11] եւ մէկ այլ տեղ, թէ՝ «Ո՛չ թէ մարդու պէս է տեսնում Աստուած, քանզի մարդը դէմքին է նայում, իսկ Աստուած՝ սրտին» [Ա Թագ. ԺՁ 7]: Եւ ոչ միայն սրտի խորհուրդն է տեսնում, այլեւ՝ այն, որը տակաւին ո՛չ մտածուած է եւ ո՛չ գործուած՝ ըստ այն խօսքի, թէ՝ «Իմ կողմից չգործուածները տեսան Քո աչքերը» [Սաղմ. ՃԼԸ 16]: Եւ ոչ միայն տեսնում է չգործուածները, այլեւ՝ գրելով պահում, ինչպէս եւ [Դաւիթն] է ասում. «...եւ Քո գրքում բոլորը գրուեցին» [նոյնը]: Արդ, այդպիսի Տեսնողի ամէն ոք պէտք է իրեն մերձաւոր համարի եւ այնժա՛մ չի մեղանչի:

ԽԵ

Դարձեալ պէտք է աչքը բանա՛լ՝ տեսնելու արարածներին եւ Աստուծոյ սքանչելի գործերը: Եւ մարմնաւոր աչքերով նայելիս նրանց հետ բանալ նաեւ մտքի աչքերը եւ իմաստութեամբ տեսնել արարածների զարմանալի

գործերը, ինչպէս եւ Դաւիթն էր տեսնելով ասում. «Տեսայ երկինքը՝ Քո մատների գործը, լուսինն ու աստղերը, որոնք Դու հաստատեցիր» [Սաղմ. Ը 4]: Այսինքն՝ նայել երկնքի բարձրութեանն ու ընդարձակութեանը, լուսատուների պայծառութեանն ու գեղեցկակարգութեանը եւ սրանցից յետոյ՝ ամպերին, անձրեւներին, հողմերին, ձեանը, սառոյցին, կարկուտին, հողին, բոյսերին, տունկերին, մարդու գեղեցկակազմութեանը, անասուններին, գազաններին, թռչուններին, ծովին, աղբիւրներին, գետերին, եւ ինչո՞ւ այլեւս մէկ առ մէկ ասեմ՝ միւս բոլո՛ր ստեղծուածներին: Եւ նախ սրանցից է պէտք ճանաչել Աստուծոյ մեծութիւնը, իմաստութիւնը, անչափ զօրութիւնն ու բարերարութիւնը, թէ այս ամէնը մեզ համար է արարուած: Եւ որ սրանից էլ հրաշափառ է, [այ՛ն], թէ ինչպէս է նախախնամող զօրութեամբ ամէն ինչ կառավարում եւ պահում անքա՛կտելի հաստատութեան մէջ, քանզի այս աշխարհի մարմնի՝ երկրի եւ ծովի այս անբաւ ծանրութեանը ո՛չ հիմք կայ, ո՛չ հաստատութիւն եւ ո՛չ սիւներ, այլ ամէն ինչ ոչնչի վրայ է հաստատուած, մանաւանդ թէ՝ Աստուծոյ հրամանի վրայ՝ ըստ առաքեալի, թէ՝ «Դահում է ամէն ինչ Իր զօրութեան խօսքով» [Եբր. Ա 3]:

ԽԶ

Արդ, այս ամենի եւ այսպիսիների միջոցով պէտք է բանալ աչքերը եւ տեսնել ու ճանաչել Աստուծոյ անհաս մեծութիւնը, իմաստութիւնն ու զօրութիւնը: Քանզի երկինքը, երկիրն ու սրանցում եղածներն ասես գրով եւ խօսքով Աստուծոյ անբաւութեան մասին են պատմում՝ ըստ այն [խօսքի], թէ՝ «Երկինքը պատմում է Աստուծոյ փառքը» [Սաղմ. ԺԸ 1]: Եւ այս անպատմելի արարչութիւնը տեսնելիս այնուհետեւ շարժել միտքն ու լեզուն Աստծուն փառաբանելու համար եւ ամէն ինչում փառաւորել ստեղծուածների Արարչին: Քանզի Անանիայենք սրանք տեսնելով էին բոլոր արարածներին կանչում Աստծուն օրհնելու՝ ասելով. «Տիրոջ բոլո՛ր գործեր, Տիրոջն օրհնեցէ՛ք» [Դան. Գ 57]: Եւ, շարակարգելով երկինքն ու երկնքում եղածները, օդն ու սրանում եղածները, ասում էին, որ օրհնեն Աստծուն. ո՛չ թէ որովհետեւ նրանք օրհնում են Աստծուն, քանզի անխօս են եւ անմիտ, այլ մտաւոր եւ բանաւոր մարդիկ, տեսնելով նրանցում կատարուող սքանչելագործութիւնները, փառաւորեն Արարչին: Եւ ոչ միայն այսպիսի՛ հրաշագան եւ զարմանագործ տեսութեան պատճառով իմաստնաբար տեսնողները փառաւորում են

Աստծուն, այլեւ՝ այն տեսութիւնների, որոնք շատերին չարիքի պատճառ են թւում: Քանզի նրանք, որոնց մարմնաւոր աչքերի հետ նաեւ հոգու աչքերն են բաց, նրանցից, որոնցից հոգով կուրացածները վնասւում են, իրենք մեծապէս շահում են՝ բժիշկների նմանութեամբ, ովքեր բազում անգամ վնասակար նիւթերից օգտակար դեղեր են ստանում. ինչպէս [օրինակ]՝ օձից ստանում են նրանց թոյնը խափանող միջոցներ եւ այլ մահացու դեղերից՝ սատակիչ ներգործութիւններ:

ԽԷ

Եւ եթէ ուզում էք, պատահած եւ գրի առնուած իրադարձութիւններով հաստատեմ այս ասածները: Քանզի Անտիոք քաղաքում հռչակելի գեղեցկութեամբ ոմն պառնիկ՝ Պելագիա անուամբ, ում գեղեցկութեան համբաւը ոչ միայն քաղաքում, այլեւ շրջակայ բոլոր վայրերում էր տարածուել, ում մօտ նաեւ տարբեր կողմերից վաւաշոտ երիտասարդներ էին գալիս, մի օր, բաղնիքից ելնելով, բեհեզ եւ ծիրանի հագնելով, գլուխը, կուրծքը, պարանոցն ու մարմնի գրեթէ բոլոր մասերը ոսկով, մարգարտով, թանկարժէք քարերով զարդարելով, աչքերը սեւ ներկելով, այտերը սպիտակեցնելով եւ կարմրացնելով, անուշահոտ իւղով օծուելով, լկտի կերպարանքով գալիս անցնում է քաղաքի միջով՝ սպասաւորելով այն բազմութիւնների մէջ եղող հեշտասէրներին: Իսկ Նոնոս անուամբ ոմն եպիսկոպոս եկեղեցականներով հանդերձ նստել էր եկեղեցու սրահում, որով անցնում էր պառնիկը, ում տեսնելուց ողջախոհ եկեղեցականներից շատերը շրջում էին դէմքերը: Իսկ սուրբ եպիսկոպոսը ակնասեւեռ երկար նայում էր նրան, մինչեւ որ տեսնողներից շատերն իրենց մտքում բամբասում էին նրա մասին, թէ երկար է նայում պառնիկի արտաքինին: Իսկ նա յանկարծ, արտասուք թափելով, դառնապէս լաց եղաւ: Մերձակայ գտնուողները, որոնք բամբասում էին նրա նայուածքի համար, մօտենալով հարցրեցին, թէ ինչ էր պառնիկի արտաքինի վրայ ակնասեւեռ նայելը, եւ ինչի համար է ողբումը: Իսկ նա, տակաւին արտասուելով, պատասխանեց. «Վա՜յ ինձ, որդեակներ, որովհետեւ տեսայ այն կնոջը, որ ամէն տեսակ հնարներով, պէս–պէս ու զանազան զարդերով, որչափ կարող էր, զարդարել էր իրեն, եւ այն արել էր մոլեկան եւ մեղասէր երիտասարդների պատճառով, որպէսզի նրանց հաճելի թուայ եւ նրանց ախտաւոր ցանկութիւնը շարժի՝ խառնակուելու իր՝ հետ: Իսկ ես հարսնացել եմ երկնաւոր Փեսային, որ իմ հանդէպ Իր անճառ սիրոյ պատճառով գերակայ փառքի անբաւ

բարձրութիւնից խոնարհուեց գարշութեանս համար, խաչով եւ Արեամբ գնեց մեղքի ծառայութիւնից, սրբարար Աւազանով լուաց եւ [Սուրբ] Հոգու շնորհներով զարդարեց: Տուեց նաեւ Իր գեղեցկացուցիչ պատուիրանները եւ սովորեցրեց, թէ ինչպէս նրանցով օր ըստ օրէ զարդարեմ հոգու եւ մարմնի բոլոր մասերը, որ անճառելի սիրով Նա իմ մէջ բնակուի, եւ ես՝ Նրա մէջ: Իսկ ես, ըստ առակողի, նորից վերադարձայ փսխածին եւ թաւալուեցի տիղմի մէջ, որից լուացուել էի, եւ շնորհներով Նրանից [ստացած] զարդարանքները մեղքերով աղտոտեցի եւ չշտապեցի՝ հոգիս ապաշխարութեան ջրով վերստին լուանալու եւ պատուիրանի պահպանութեամբ զարդարելու, որպէսզի հաճելի լինեմ երկնաւոր Փեսային, որ սիրեց ինձ եւ Իր անձը մահուան մատնեց ինձ համար»: Եւ, այս լսելով, զարմացան նրա մտքի արթնութեան եւ հոգու անախտութեան վրայ եւ փառաւորեցին Աստծուն: Ահա տեսնո՞ւմ ես, որ ջանացողներն ու արթունները վնասակարներից եւս շահում են, բայց ծոյլերն ու մեղկերն օգտակարներից էլ են շատ անգամ վնասւում:

ԽԸ

Արդ, զգայարանների այս առաջին դուռը բարւոք փակուեց եւ բացուեց: Բայց պէտք է եւ երկրորդն, ըստ նոյն օրինակի, փակել ընդդէմ բոլոր մահացու եւ կորստական խօսքերի: Քանզի ինչպէս որ աչքն է տեսնելով դէպի չարը խոտորւում եւ իր հետ գործակցութեան շարժում ամբողջ մարմինը, այնպէս էլ ունկն է լսելով ապականւում եւ, ապականագործ լուրը ներսն ընդունելով, սրտի շտեմարաններում ամբարում՝ իբրեւ յարդի մէջ թաքցուած կայծ, որ պատեհ ժամանակ, որեւէ քամուց արծարծուելով, կիզող բոցն է բորբոքում: Եւ սա ամենաառաջին մեղքն է. քանզի ամենից առաջ բանսարկուն եւս օձի միջոցով մերձեցաւ նախամօր ականջին եւ հեղեց դառը թոյնը, որի պատճառով նա մեռաւ եւ իր ծնունդների մահուան պատճառն եղաւ: Արդ, ախտաւոր լսելութեան առաջին մուտքն այն է, երբ միմեանց տոփողները՝ այր եւ կամ կին, հեշտալի եւ մեղկ խօսք են միմեանցից լսում, որն իբրեւ երկսայրի սուր հոգին խոցում է եւ, ցանկութեան պարաններով գերելով, տանում մեղքերի կատարման:

ԽԹ

Սրան է յարում նաեւ չար միջնորդի խօսքը, որ կորստական

պատգամները է տանում ու բերում երկուսի միջեւ, ինչպէս եւ օձը՝ Եւայի եւ բանսարկուի միջեւ: Եւ սա առաւել անհերեւելի է, քան շնութիւնը, քանզի թէպէտ եւ շնութիւնը չար ու դժնդակ յանցանք է, որ արքայութիւնից զրկում եւ գեհենին ժառանգ է դարձնում, սակայն ստիպող պատճառը եւ մեղքի հարկադրողը մարմնի ցանկութիւնն է, սատանայի թելադրութիւնը եւ ախտագարշութեան բորբոքումը: Իսկ անօրէն միջնորդը, բնութիւնից եւ ոչ մի հարկադրում կամ բռնութիւն ունենալով, ո՞ր պատճառով է կործանում [իրեն] այս սաստիկ մեղքերով, քանի որ, ըստ երկու [հոգու] յանցանքների չափի, որոնց մեղքերի պատճառն հանդիսացաւ, Դատաստանի Օրը կրկնակի եւ է՛լ առաւել վրէժ պիտի ընդունի գեհենի կիզող հրում:

Ծ

Դարձեալ ունկի միջոցով են լսում բոլոր չար խորհրդակցութիւնները եւ անօրէնութեան, աւազակութեան, գողակցութեան գործերը, որոնցից առակի խօսքը հրաժարուել է ուսուցանում՝ ասելով. «Որդեա՛կ, թող չխաբեն քեզ ամբարիշտ այրերը եւ ասեն. «Եկ մեզ հետ արիւնահեղութեան կցո՛րդ եղիր, առանց պատճառի հողում ծածկենք արդար մարդուն, կենդանի թաղենք նրան գերեզմանում» [տե՛ս Առակ. Ա 10]: Նրանց խրատում է՝ ասելով. «Ճանապարհ մի՛ գնա նրանց հետ, խոտորի՛ր քո ոտքը նրանց շաւիղներից» [Առակ. Ա 15]: Նաեւ մարդկանց չարախօսութիւնն է ունկով սիրտ մտնում անփակ լեզուներից եւ անդուռ բերաններից, որոնք, սատանայի գործիք դարձած, նրա հեղած թոյնն են իրենց լեզուով ուրիշների ականջներին մօտեցնում եւ դրդում նրանց բարկութեան, ատելութեան, հայհոյութեան, ոխակալութեան, թշնամանքի, բամբասանքի, մատնութեան, դաւաճանութեան, զրպարտութեան, որոգայթադրութեան, սպանութեան եւ նման չարիքների:

ԾԱ

Դարձեալ ունկի ախտ է նաեւ այս. ոչ թէ միջնորդներին լսելով, այլ մէկից դէմ–յանդիման թշնամանք, նախատինք, պարսաւանք, արհամարհութիւն, հայհոյութիւն, զրկանք, յափշտակութիւն, տուգանք եւ ոտնահարութիւն կրելը: Արդ, վերն ասած այսպիսի բոլոր ախտերի եւ սրանց նմանների դէմ է պէտք փակել ունկն ու բնաւ թոյլ չտալ, որ մտնեն ականջ՝ ընկնելու նշուած չարիքների մէջ, քանզի այսպիսի

ախտերն իբրեւ քաղցկեղ ճարակում են հոգին: Այլ բարուք նախանձաւորութեամբ լցուել՝ ըստ Դաւթի, որ ասում է. «Երբ մեղաւորն իմ առջեւ հակառակեց, խուլ եղայ եւ խոնարհուեցի եւ եղայ ես որպէս մարդ, որ չի լսում» [տե՛ս Սաղմ. ԼԸ 2], քանզի ով կամենում է հոգին ապրեցնել, կամ սկզբից չի լսում եւ կամ, եթէ լսում է, չի զայրանում, ուշադրութիւն չի դարձնում եւ չի պատասխանում:

ԾԲ

Եւ դարձեալ՝ սա ընդարձակ բանալ ամէն տեսակ բարուք խօսքերի մուտքի համար, այսինքն՝ հաւատքի խօսքերի եւ Աստուծոյ պատուիրանների՝ քարոզուող ըստ օրէնքի եւ մարգարէների, աւետարանական եւ առաքելական վարդապետութեան: Լսել օրէնքը, որ ասում է. «Քո Տէր Աստուած Մի Տէր է: Եւ պիտի սիրես քո Տէր Աստծուն քո ամբողջ սրտով եւ քո ընկերոջը՝ ինչպէս քո անձը» [տե՛ս Բ Օրին. Զ 4, 5] եւ «Մի՛ սպանիր, մի՛ շնանա, մի՛ գողանա, պատուի՛ր քո հօրն ու մօրը» [տե՛ս Բ Օրին. Ե 16]: [Լսել] նաեւ մարգարէներին, որ ասում են. «Խոտորուի՛ր չարից, գործի՛ր բարին եւ խաղաղութեա՛մբ ընթացիր» [Սաղմ. ԼԳ 15] եւ դարձեալ՝ «Լուացուե՛ք մեղքերից, սրբուե՛ք անօրէնութիւններից, զցե՛ք չարութիւնն անձերից, սովորէք գործել բարի՛ն, իրաւունքը փնտրէք, զրկուածի՛ն փրկէք, որբի դա՛տն արէք եւ այրու իրաւունքը տուէք» [տե՛ս Եսայի Ա 16] եւ թէ՝ «Բրդի՛ր քո հացը քաղցածներին եւ անօթեւան աղքատներին տա՛ր քո տուն: Եթէ մերկ ես տեսնում, հագցրո՛ւ եւ ընտանիքիդ զաւակին մի՛ անտեսիր» [տե՛ս Եսայի ԾԸ 7]: [Լսել] նաեւ սուրբ Աւետարանի [խօսքերը], թէ՝ «Ինչպէս կամենում էք, որ մարդիկ ձեզ անեն, այնպէս էլ դո՛ւք արէք նրանց: Եւ սիրեցէ՛ք ձեր թշնամիներին, բարի՛ք գործէք ձեզ ատողներին, աղո՛թք արէք ձեզ լկողների համար: Եւ ով խփում է քո ծնօտին, նրան մի՛ւսն էլ մօտեցրու, եւ ով քեզանից քո բաճկոնն է հանում, մի՛ արգելիր նրան [հանել] նաեւ շապիկդ: Գանձէ՛ք ձեզ գանձեր երկնքում եւ փոխ տուէք նրա՛ն, ումից ստանալու ակնկալութիւն չունէք» [տե՛ս Ղուկ. Զ 27 եւն]: [Լսել] նաեւ առաքելականներին, թէ՝ «Ամէն դառնութիւն, աղաղակ, սրտմտութիւն եւ հայհոյութիւն թող վերանայ ձեզանից ամէն չարութեամբ հանդերձ: Եւ արեգակը ձեր բարկութեան վրայ թող մայր չմտնի» [Եփես. Դ 31, 26] եւ «Սպանէ՛ք ձեր երկրաւոր անդամները, հեռո՛ւ զցէք պոռնկութիւն, պղծութիւն եւ ագահութիւն, որ կռապաշտութիւն է, եւ հագէք գութ, քաղցրութիւն, համբերութիւն: Եւ

հեռու թոթափէք ամէն չարութիւն, կեղծաւորութիւն, նախանձ եւ ամէն չարախօսութիւն» [տես Կող. Գ 5 եւն] եւ «Սիրէ՛ք միմեանց, քանզի սէրն Աստծուց է, եւ ամէն ոք, ով սիրում է, Աստծուց է ծնուած եւ ճանաչում է Աստծուն» [Ա Յովհ. Դ 7] եւ «Ոչ թէ խօսքով եւ լեզուով սիրէք, այլ՝ գործով եւ ճշմարտութեամբ» [Ա Յովհ. Գ 18] եւ այլ ամէն տեսակ փրկական եւ ոգեկեցոյց [խօսքեր], որոնց թիւ չկայ: Դարձեալ՝ ականջները պէտք է բանալ նաեւ ամէն խնդրողի առաջ, ով հարկաւոր պէտքերն է պահանջում՝ բաւարարելու մարմնի կարիքները, եւ կամ՝ հոգեւոր խրատներ [տալ], որն աւելի մեծ է եւ օգտակար, քան մարմնի կարիքը յագեցնելը: Եւ այսպէս Աստուծոյ կամքի համաձայն է լինում քո լսելիքը բացելը:

ԾԳ

Եւ հոտոտելիքդ փակի՛ր ընդդէմ ամէն տեսակ հեշտալի եւ ախտաւոր հոտերի, որոնք սովորաբար վաւաշոտների մօտ են տեսնւում, քանի որ անուշահոտութեան ամէն տեսակ հնարներ են յօրինում մարմնի եւ հանդերձների համար՝ ախտաւոր ցանկութեանը նիւթ եւ զօրութիւն տալու, որով հոգիների ամրութիւնը մեղկացնելով թուլացնում են՝ վայր ընկնելով արիական հանդէսի պնդակազմութեան բարձրութիւնից: Եւ ընդհակառակը՝ բա՛ց Քրիստոսի անուշահոտութեան համար, որն առաքեալների միջոցով ծաւալուեց տիեզերքով մէկ, ինչպէս եւ Պօղոսն է ասում. «Իրեն ճանաչելու հոտը մեր միջոցով է ամէն տեղ յայտնի դարձնում, թէ Աստուծոյ առջեւ Քրիստոսի անուշ հոտն ենք փրկեալների եւ կորուսեալների մէջ. ոմանց համար հոտ՝ մահուանից դէպի մահ եւ ոմանց՝ կենդանութիւնից դէպի կեանք» [տե՛ս Բ Կորն. Բ 16]: Քանզի ովքեր ախտաւոր հոտի գարշութիւնն աւելի սիրեցին, քան հոտը Կենդանացնողին, նրանց մահ եղաւ՝ նրանց անփափագ լինելու համար դատապարտելով: Իսկ ովքեր այս զազրելի [հոտերն] արհամարհեցին Ճշմարիտի սիրով, նրանց համար իրապէս կեանքի պատճառ եղաւ, Ում մասին էլ Երգ երգոցում այս ըղձացող պանծալի հարսը յայտարարում է. «Հեղուած իւղ է Քո անունը, ուստի եւ օրիորդները սիրեցին Քեզ» [Երգ. Ա 2] եւ այդ կեանքն անախտ սիրով իրենց մէջ առան եւ այդ կեանքի միաւորութեամբ կենդանացան մշտնջենաւոր անմահութեան համար:

ԾԴ

Ովքեր ախորժում են սրբութեամբ հաղորդ լինել Ամենասուրբին, պէտք

է նաեւ ճաշակելիքը փակեն ընդդէմ ամէն վնասակար հեշտութեան: Քանի որ թէպէտ եւ Աստծուց թոյլ է տրուած հարկաւորի վայելումը, ինչպէս եւ ասաց. «Ահաւասիկ տուեցի ձեզ ամէն բան, կերէ՛ք իբրեւ բանջար» [Ծնն. Թ 3], քանզի, որպէս մարմինն արարող, գիտէր նրա տկարութիւնն ու պէտքերը, բայց արգելեց աւելորդ կերակուրներից՝ անչափ որկորստութիւնից*, որով անմիտներն անկարգաբար խճողում են որովայնները, որովհետեւ չգիտեն մեր բնութեան կարգաւորութիւնը, թէ կերակուրն Արարչից նրա համար տրուեց կենդանիներին, որ կենդանութիւն, զօրութիւն եւ առողջութիւն պահի մարմինների մէջ: Քանզի բնութիւնը, հոսանուտ** լինելով, ստացածը չի պահում, ուստի եւ թափուածի փոխարէն լրացման կարիք է զգում: Իսկ նրանք, այս չիմանալով, կարծում են անյագութեամբ առաւե՛լ շնորհ տալ որովայնին, որով ոչ միայն հոգին, այլեւ մարմինը, որին բարեգործել են կարծում, վնասում են եւ բազում ցաւերով պատում, շատ անգամ նաեւ՝ մահուամբ՝ դրանցում անասուններից էլ անմիտ երեւալով, քանզի նրանք, ընդունելով կերակրի եւ ըմպելիքի կարիքի չափը, թեւ այլ բազում [կերակուրներ] էլ առջեւները դրուած լինեն, դրանց վրայ նոյնիսկ նայել չեն կամենում: Իսկ սրանք ագահութեամբ կեանքի պատճառները մահուան [պատճառ] են դարձնում, մարմինը ծանր ցաւերով վտանգում եւ անմահ հոգին յաւիտենական մահուանը ժառանգ դարձնում՝ մոռացած իրենց համար առաքեալի ողբը, որ ասում է. «Լալով ասում եմ Քրիստոսի Խաչի թշնամիներին, որոնց վախճանը կորուստն է, որոնց աստուածը՝ իրենց որովայնը, եւ փառքը՝ ամօթը» [Փիլիպ. Գ 19], այսինքն՝ որովայնամոլութիւնը: Եւ զուր չի աստուած անուանում այդպիսիների որովայնը, այլ՝ ճշմարտացիօրէն, քանզի Աստուծոյ պատիւը ճանաչում է Նրա պաշտամունքից եւ պատուիրանի կատարումից, իսկ որովայնինը՝ վերջինիս սպասաւորելուց: Արդ, ովքեր որովայնին առաւել են հպատակւում, քան Աստուծոյ պաշտամունքին եւ պատուիրանին, քաջայայտ է, թէ որովայնն են աստուած համարում, որին էլ ծառայութիւն են մատուցում: Յիրաւի է նաեւ Խաչի թշնամիներ կոչում այդպիսիներին, քանզի Խաչի անունը չարչարանքներն են՝ ըստ հէնց Տիրոջ խօսքի. «Ով կամենում է,– ասում է,– գալ Իմ ետեւից, թող վերցնի խաչը եւ գայ» [տե՛ս Մատ. ԺԶ 24], այսինքն՝ չարչարանքները: Քանզի «Եւ,– ասում է,– մարմնազգեցութեանս մէջ խաչի եւ չարչարանքների ճանապարհով

* որկորստութիւն— որկրամոլութիւն, որովայնամոլութիւն
** հոսանուտ— հոսական, հոսող եւ լուծուող. հոսանուտութեամբ բնորոշում է մարդկային բնութեան սննդառական համակարգը

գնացի, որով եւ Իմ սեփական փառքի մէջ մտայ: Եւ ով ցանկանում է Ինձ հետ գալ եւ Իմ փառքի մէջ փառատրուել, խաչի, այսինքն՝ չարչարանքների ճանապարհով թող գայ, որը նեղ է եւ անձուկ: Քանզի ով լայն եւ ընդարձակ [ճանապարհով] է ընթանում, որը որկորստութիւնն ու այլ մարմնական հեշտութիւններն են, նա ոչ թէ կեանքի եւ փառքի կհասնի, այլ՝ տանջանքների եւ կորստեան»: Նոյնը նաեւ առաքեալն է ցոյց տալիս՝ ասելով. «Եթէ Քրիստոսի չարչարանքներին ենք կցորդ, Նրա փառքին էլ հաղորդ կլինենք» [Հռոմ. Ը 17]:

ԾԵ

Իսկ ինչ ասեմ արբեցողների մասին, որոնք յոյժ գերազանցում են անյագ ուտողներին: Քանզի ովքեր կերակուրների ագահութեամբ են ընթանում, թէպէտ, ըստ վերն ասածի, հոգին եւ մարմինը վնասում են, սակայն բանական իմաստութիւնը, որով անբան կենդանիներից տարբերուեցինք, չեն եղծում, այլ առողջ են մնում բանականութեամբ եւ խոհականի ընտրողութեամբ: Իսկ արբեցողները բանական իմաստութիւնը, որը տիրականի պատկերն է, ապականում են, քանի որ ըստ պատշաճի ոչ խորհել եւ ոչ գործել են կարողանում: Եւ սրանով ոչ միայն անասուններին են հաւասարում, այլեւ նրանցից շատ աւելի անմիտ դառնում: Քանզի թէպէտ եւ նրանք բանական հանճարից զրկուած են, սակայն ունեն բնական շարժումներ՝ ըստ իրենց կեանքի կարիքի չափի՝ իրենց օգտակարն ընտրելու, այսինքն՝ միմեանցից տարբերելու առողջարար եւ մահացու կերակուրները: Գիշատիչ գազաններից խուսափում են, որոգայթներից զգուշանում, գահաւանդներից եւ խորխորատներից հեռու մնում, ամռանը ցուրտ լեռները ելնում, ձմռանը տօթագին դաշտերն իջնում եւ սրանց նման այլ բազում [արարքներով] խոհականութեան կերպարանքն են իրենցում արտայայտում: Եւ ոչ միայն՝ այսքանը, այլեւ ոտքով ուղիղ են քայլում, աչքով՝ անսխալ տեսնում եւ ունկով՝ արագ լսում: Իսկ արբեցողները ոչ միայն բանական իմաստութիւնն ու խոհական ընտրողութիւնն են կորցնում, այլեւ այս անասնային [յատկութիւններն] էլ իրենցում չունեն, քանզի բոլոր զգայական զօրութիւնները կորցնում են, որովհետեւ ոտքով ուղիղ չեն կարողանում ընթանալ, այլ՝ երերուն, եւ շուտով ընկնելով տապալւում են եւ ուրիշների կողմից իբրեւ դի բարձրացուելով բերւում: Եւ ոչ էլ աչքերն են ըստ պատշաճի տեսնում, մինչեւ իսկ բարեկամներին եւ թշնամիներին միմեանցից տարբերել չեն

կարողանում: Ունկը եւս ճիշտ չի լսում, քանզի բազում խօսքեր այլ կերպ է հասկանում: Ոչ էլ լեզուն է, խօսքին յարմարուելով, կապակցուած եւ ըստ կարգի շարժւում: Ձեռքը նոյնպէս պատշաճապէս չի շարժւում՝ գործելու համար: Իսկ նրանց մասին, ովքեր, անմիտ կերպով շռայլելով, գինարբուների հաւաքի մէջ անմտաբար ծախսում են եւ յետոյ զղջում, ինչ պէտք է ասել, քանզի [դրանցից] շատերը կեանքի միջոցը՝ ամբողջ ունեցուածքը, մէկ օրում վատնում են: Եւ միայն այսչափ չեն արբեցութեան վնասները, այլ քանի որ [արբեցողը] խելայեղ է դառնում եւ չի իմանում՝ ինչ է խօսում եւ կամ գործում, խօսքով ընկնում է վէճերի, գրգռութեան, հակառակութեան, բարկութեան եւ զայրոյթի, կռուի եւ թշնամանքի, հայհոյութիւնների եւ նախատինքի, արհամարհանքի եւ ոտնահարութեան եւ սրանցից էլ՝ հարուածների եւ ծեծերի մէջ, որոնց պատճառով բազում անգամ տեղի են ունենում նաեւ սպանութիւններ: Սրան [հետեւում են] բանտ, կապանք, տուգանք եւ ունեցուածքի յափշտակութիւն, անդամահատում, հայրենիքից վտարում, օտարութեան մէջ հալածանք եւ կամ՝ մահուան փոխարէն մահ: Ահա տեսնո՞ւմ ես, որ արբեցողը ոչ միայն անասուններին է հաւասարւում, այլեւ խոզերից, շներից, գորտերից եւ այլ աւելի զազրելի զեռուններից աւելի վատթար է: Եւ սրանք մարմնական [տուգանքներն] են, որոնք յոյժ փոքր եւ նուազ են հոգեւոր տուգանքների համեմատութեամբ: Քանզի շների*, պոռնիկների, սպանողների եւ չարագործների հետ արբեցողը զրկւում է արքայութիւնից եւ ժառանգում մշտավառ եւ անշիջանելի գեհենը՝ ըստ առաքելական խօսքի. «Մի՛ խաբուէք,– ասում է,– քանզի ոչ՛ շները, ոչ՛ պոռնիկները, ոչ՛ իգացողները, ոչ՛ արուագէտները, ոչ՛ բամբասողները, ոչ՛ արբեցողները չեն ժառանգի Աստուծոյ արքայութիւնը» [տես Ա Կորն. Զ 9]:

ԾԶ

Ուրիշ շատեր էլ կան, ովքեր ոչ միայն որկորստութեամբ եւ արբեցութեամբ են սահմանն անցնում, այլեւ աստուածային օրէնքով սահմանուած պահքն են լուծում. ոմանք՝ ամէն տեսակ անթոյլատրելի կերակուրներով, ոմանք էլ՝ ձկով, գինով եւ ձէթով: Եւ պատճառաբանում են՝ ասելով. «Աստուած կերակրի համար չի բարկանում որեւէ մէկի վրայ, քանզի այն պատճառով ստեղծեց այն եւ տուեց մեզ, որպէսզի վայելենք Նրա առատ պարգեւներն ու փառաւորենք Նրան: Սի՛րտը,– ասում են,– պէտք է պահել չարից եւ որեւէ մէկի հանդէպ չար չգործել, քանզի այս

* շուն– շնացող

են միշտ ուսուցանում աստուածային պատուիրանները»:

ԾԷ

Այդպիսիներին ասում ենք, թէ Ով պահքն օրինադրեց, ոչ [միայն] սիրտն, ասաց, չպղծել չարիքներով կամ ընկերոջը չտրտմեցնել, այլեւ դրանց հետ պահել նաեւ այս, քանզի միայն մի պատուիրանի պահպանութիւնը բաւական չէ ուղղուելու համար: Եւ լսի՛ր առաքեալին, որ ասում է. «Եթէ մէկն ամբողջ օրէնքը պահի եւ մէկ բանով մեղանչի, ամբողջ օրէնքին պարտական կլինի» [Յակ. Բ 10]: Արդ, ինչպէս որ մարմինը ոչ միայն մէկ, այլեւ ամէն տեսակ պիտանացու կերակրով ենք կերակրում, այդպէս էլ հոգին, որի կերակուրն Աստուծոյ պատուիրաններն են, ոչ մէկ կամ սակաւ, այլ բոլոր պատուիրաններով պէտք է կերակրել, քանզի Տէրը ոչ միայն ասաց, թէ մարդ կապրի Աստուծոյ բերանից ելած խօսքով, այլ՝ ամենայն խօսքով [Մատ. Դ 4]:

ԾԸ

Իսկ եթէ մէկն ասի, թէ հրաժարելի կերակուրը միսն է եւ այն, ինչ մսից է, քանի որ ծնունդ է կենդանիների, իսկ ձուկը՝ ջրի, եւ ձէթն ու գինին՝ պտուղների, որոնք անխտիր պէտք է ուտել, ո՞ւ տափակ եւ յիմար պատճառաբանութիւն. մի՞թէ բոլոր տարերքները հաւասար չեն՝ հողն ու ջուրը, օդն ու հուրը, եւ նիւթական արարածների մէջ չկայ մի էութիւն, որ այս չորս տարերքներից գոյացած չլինի՝ բանաւոր եւ անբան, կենդանի եւ անկենդան: Իսկ եթէ դարձեալ ասի, թէ Աստուած ասաց. «Թող կենդանի շունչ բխի երկրի վրայ՝ չորքոտանիներ, սողուններ եւ գազաններ՝ ըստ տեսակների» [Ծնն. Ա 24] եւ դարձեալ ասաց. «Թող հանեն ջրերը կենդանի շնչաւոր զեռուններ, թեւաւոր թռչուններ եւ կէտեր, ձկներ եւ զանազան խայտացող կենդանիներ» [տե՛ս նոյն Ա 20], եւ ահաւասիկ անասունները երկրի ծնունդ են, իսկ ձուկը՝ ջրի, ուստի պէտք է ձկներ ուտել եւ ոչ՝ անասուններ... Բայց սկզբում ասացի, թէ ոչինչ երկրի վրայ մի տարրից չի գոյացել եւ ոչ՝ երկուսից կամ երեքից, այլ՝ բոլոր չորսի՛ց: Եւ [ինչպէս] այն, որ, ասուեց, թէ հողից է, ունի ջուր եւ այլ [տարրեր] իր հետ, այդպէս էլ այն, որ ջրից է, ունի եւ՛ հողի, եւ՛ այլ [տարրերի] խառնուրդ: Իսկ եթէ դարձեալ հակառակւում ես, թէ նուազ է այն, որ ասուեց, թէ ջրից է, նրանից, որը հողից է, ինչո՞ւ նաեւ թռչունները չես ուտում, քանի որ նրանք ջրից եւս [կազմուած] են, եւ կամ ինչո՞ւ բոյսերից եւ սերմերից չես հրաժարւում, քանի որ նրանք

հողից եւս [կազմուած] են: Իսկ եթէ կենդանի լինելն ես պատճառ բերում, ահա ձկները եւս կենդանի են եւ [լինում] են մեծ եւ երկրի վրայի բոլոր կենդանիներից էլ յաղթանդամ:

ԾԹ

Բայց ես չեմ նշում այս կամ այն պատճառը, այլ՝ դրուած սահմանից անցնելը, քանզի առաջին պահքի լուծումը, որով անէծք եւ մահ մտաւ աշխարհ, մսով, ձկով, գինով եւ կամ ձէթով չէր, այլ՝ պտղով: «Բարու եւ չարի գիտութեան ծառից,– [Աստուած] ասում է,– մի՛ կերէք» [Ծնն. Բ 17]: Եւ յանցանքից յետոյ պատժելիս դարձեալ նոյնը երկրորդեց. «Փոխանակ այն բանի,– ասում է,– որ կերար այն ծառից, որից չուտել պատուիրեցի, անիծեա՛լ լինի երկիրը քո գործերի պատճառով եւն» [տե՛ս Ծնն. Գ 17]:

Կ

Արդ, ինչպէս որ աստուածային օրէնսդիրները զատեցին պահքի եւ ուտելու օրերը, այդպէս էլ զանազանեցին կերակուրները. որոնք համարեցին մարմնի համար զօրաւոր, հեշտալի եւ ախորժելի, օրինադրեցին պահքի օրերին չուտել, ոչ թէ՝ որովհետեւ Աստուած մեր պահքի կարիքն ունի, այլ՝ որպէսզի Նրա հրամանի հնազանդութեան տակ լինենք: Սա մարդկանց մէջ եւս տեսնւում է. քանզի իշխանութեան տակ ընկածների համար քննում են ոչ այնքան մեծամեծ կամ փոքր պատճառները, որքան իրենց հրամանի հանդէպ անհնազանդութիւնն ու արհամարհանքը: Այսպէս, ամէն մէկի պէտք է հնազանդուել աստուածային օրինադրութեանը, որն [Աստուած] կարգեց Եկեղեցու առաջնորդների միջոցով: Եւ կերակուրները, որոնցից, ըստ աստուածային պատուիրանի, պահքի միջոցով զրկեց իրեն, [պէտք] է յատկացնել հարկաւոր [պէտքերի] կարօտեալներին: Նաեւ ունեցուածքի, կերակուրների եւ ցանկացած բանի աւելցուկն առատապէս բաշխել եւ տալ աղքատներին, քանզի բարեգործութեան արդարութիւնը յաւիտեան կմնայ. համաձայն Բարերարի խրատի, երկրաւոր ապականացու եւ ցնդելի նիւթը, որը ցեցի եւ ժանգի կերակուր է, ասես վաճառականութեամբ տալ աղքատների ձեռքը եւ գանձել երկնքում, որն ապահով է գողերից եւ ցեցից, եւ փոխարէնը ստանալ երկնքի անապական եւ անփոփոխ արքայութիւնը՝ ըստ հէնց Տիրոջ՝ բարեգործների դասին ուղղուած երանաւէտ ձայնի. «Եկէ՛ք,– ասում է,–

Իմ Հօր օրհնեալներ, ժառանգեցէք աշխարհի սկզբից ձեզ համար պատրաստուած արքայութիւնը: Քանզի քաղցեցի, եւ կերակրեցիք Ինձ, ծարաւեցի, եւ խմեցրիք Ինձ, օտար էի, եւ վերցրեցիք Ինձ ձեր յարկի տակ, մերկ էի, եւ հագցրեցիք Ինձ, հիւանդ էի, եւ Ինձ տեսութեան եկաք, բանտում էի, եւ Ինձ մօտ եկաք»: Երբ նրանք տարակուսեցին՝ տեսնելով Նրան այնպիսի փառաւորութեան մէջ, եւ ասածները Նրան անհամապատասխան էին համարում, հարցրեցին, թէ՝ «Ե՞րբ տեսանք Քեզ այդպիսի կարիքի մէջ եւ բարեգործեցինք, ինչպէս եւ գոհանում ես»: Պատասխանեց նրանց եւ ասաց. «Որովհետեւ արեցիք այս փոքրերից եւ արհամարհուածներից մէկին, Ի՛նձ արեցիք: Քանզի Ես էի, որ նրանց ձեռքով ողորմութիւն էի վերցնում ձեր ձեռքից» [Մատթ. ԻԵ 34 եւ այլն]: Արդ, ըստ վերը գրուած այդ բոլոր վնասակար [կերակուրների] դէմ պէտք է փակել ճաշակելիքը եւ լաւագոյնների համար բանալ, եթէ պատրաստուել էք, ըստ արարչադիր հրամանի, շարժել այն բնական գործառնութեան:

ԿԱ

Այնուհետեւ պէտք է լեզուի վրայ եւս սանձ դնել, քանզի թէպէտ եւ փոքր անդամ է, սակայն մեծ–մեծ՝ [խօսքեր] է բարբառում՝ ըստ առաքելի, որն այն կոչում է անիրաւութեան զարդ եւ ամբողջ մարմնի ապականիչ. «Նրանով,– ասում է,– օրհնում ենք Աստծուն եւ նրանով անիծում մարդկանց, որոնք Աստուծոյ պատկերով ստեղծուեցին»: Եւ, քաղցր ու ողոքական խօսքով խրատելով, ասում է. «Չպէ՛տք է, եղբայրնե՛ր, սա այսպէս լինի, քանզի ինչպէս աղբիւրը մի ակունքից միաժամանակ քաղցր եւ դառը [ջուր] չի բխեցնում» [տե՛ս Յակ. Գ 9], այնպէս էլ լեզուն, որն Արարչից իբրեւ քաղցր եւ շնորհալից խօսքերի գործարան հաստատուեց մեր այս բնութեան մէջ, իրաւացի չէ՛, որ հայհոյութեան եւ բամբասանքի, վէճի եւ հակառակութեան, ստութեան եւ չարախօսութեան, թշնամանքի եւ զրպարտութեան, քսութեան եւ մատնութեան, խեղկատակութեան եւ դատարկաբանութեան, երդմնահարութեան եւ շողոքորթութեան եւ այլ յոգնապատիկ շաղակրատութեան դառնութիւն իրենից բխեցնի, մանաւանդ՝ յիշոցատութեան անօրէն եւ հոգեկորոյս խօսքերը, որոնք որոմնացան թշնամու սերմանած եւ նրա հաճոյակատար մշակների մշակած եւ աճեցրած սերմերն են, որ բոլոր յանցանքներից առաւել դժնդակ եւ ծանր է եւ առաւել է խաւարեցնում հոգու պայծառութիւնը եւ անխուսափելի ժառանգ դարձնում անշիջանելի

գեհենի մշտավառ հրին: Քանզի եթէ եղբօրը յիմար եւ մորոս* ասելը, ըստ Տիրոջ խօսքի, գեհենին է պարտաւորեցնում, որչա՞փ առաւել եւս՝ ամէն ականջի համար անհնարին եւ դժնդակ անարգանքների եւ նախատինքների խօսքերը՝ ասես դժոխային մտքերից հաւաքուած եւ [դժոխային] լեզուից թափուող: Մինչեւ իսկ անաւանների եւ գազանների նմանեցնող խօսքերով են անարգում Աստուծոյ պատկերով ստեղծուած մարդուն, որով նախատիպ Աստծուն իրենց վրայ բարկութեան եւ վրէժխնդրութեան են շարժում: Շատ անգամ էլ սուրբ եւ անմեղ հոգիներին են հայհոյում: [Այսպիսիների մասին] Տէրն ասաց, թէ բնա՛ թողութիւն չեն ունենայ՝ ո՛չ այս եւ ո՛չ հանդերձեալ աշխարհում:

ԿԲ

Այլ լեզուն պէտք է սանձել այս բոլոր անկարգ շարժումների հանդէպ, դարձեալ՝ գեղեցկապէս այն շարժել երեք Անձերի եւ Մի Աստուածութեան՝ համաբուն եւ զուգական Երրորդութեան սուրբ եւ ուղղափառ հաւատքի խոստովանութեան, աշխարհանորոգ եւ փրկական տնօրինութեան դաւանութեան, անսահման բարերարութեան եւ յոգնառատ պարգեւաբաշխութեան օրհնութեան եւ փառաբանութեան, [սեփական] անձի եւ ազգի փրկութեան համար մշտանուէր աղերսների, գործերով, խօսքերով եւ խորհուրդներով նախապէս գործուած յանցանքների անընկիւղ յանդիմանութեամբ եւ գովելի ամօթխածութեամբ, անպատկառապէս, մեծամեծերից չնչիններին հասնելով, խոստովանութեան, նաեւ՝ խրատելու, օգտակար լինելու համար նրանց, ովքեր նման հոգեւոր եւ մարմնաւոր կարիքներ ունեն: Ձեռք պարզել սայթաքածներին, մխիթարել ագաւորներին, կանգնեցնել յուսահատութեամբ ընկածներին, բժշկել թերահաւատութեամբ ընկճուածներին, քաջալերել հեղգութեամբ վհատուածներին, սրտապնդել արիութիւնից յոդոդոդուածներին, զօրացնել պնդութեամբ հաստատուններին: Եւ երբէք չխօսել այն, ինչ պիտանի չէ ո՛չ իրեն եւ ո՛չ լսողին, այլ՝ ինչ բոլորին է օգտակար՝ ըստ առաքելի, որ ասում է. «Թող ձեր խօսքը ճշմարտութեան աղով համեմուած լինի, որպէսզի շնորհներ տայ լսողներին» [Կողոս. Դ 6]:

* մորոս— խօլ, գիժ

ԿԳ

Ապա ըստ կարգի պատշաճ է խօսել նաեւ շօշափելիքի մասին եւ նրա յանդուգն յարձակումը ետ մղել, որի միջոցով [հոգին] դիւրութեամբ մտնում է չարութեան մէջ եւ ընկնում մեղքերի մէջ: Եւ նախ պէտք է կարճել գարշ ու զազրելի շօշափումը, որը զեխերի եւ անառակների մօտ ամուսնութեան եւ պոռնկութեան ժամանակ է լինում: Չեմ ասում՝ զգաստների եւ պարկեշտների մօտ, քանի որ նրանք խորշում են այդպիսի աղտեղութիւններից: Քանզի մեր բնութիւնն ամէն պիտանի գործի համար պատշաճաւոր գործիք իրենից ունի, եւ ինչպէս որ իւրաքանչիւր գործի մէջ իրեն յարմար գործիքներով է շարժւում, նմանապէս էլ սրանցում իրեններով կբաւարարուի: Կան վաւաշտներից ոմանք, ովքեր նոյնիսկ առանց գործակցի մաքառում են իրենք իրենց դէմ եւ ախտերի* հոսմամբ գարշ ցանկութիւններ կատարում, որը ոչնչով նուազ չէ պոռնկութիւնից, այլ զոյգ եւ հաւասար է շնութեանը, գործողին արքայութիւնից հեռացնում է եւ գեհենին ժառանգ դարձնում: Սրանից պէտք է առաւել զգուշանալ, քանզի հեշտութիւնը սակաւ է, իսկ պատուհասը՝ բազում:

ԿԴ

Ձեռքերը գողութիւնից եւս պէտք է հեռու պահել՝ ըստ առաքեալի հրամանի, որ ասում է. «Ով գողանում էր, թող այլեւս չգողանայ, այլ մանաւանդ աշխատի իր ձեռքերով բարիք գործել, որպէսզի կարողանայ տալ, ում պէտք լինի» [Եփես. Դ 28]: Ձեռքերը կաշառքից եւս [պէտք է] թօթափել, որը պարսաւում է մարգարէն՝ ասելով. «Նրանց ձեռքերն անօրինութեան մէջ են, եւ նրանց աջ ձեռքը լի է կաշառքով» [Սաղմ. ԻԵ 10]: Քանի որ կաշառքն, ասում է, կուրացնում է վերցնողին՝ դատաստանը թիւրելու, որովհետեւ անհնար է զուգակցել կաշառքը եւ իրաւունքը: Քանզի ինչպէս որ հուրը մոմն [է հալեցնում], եւ ծուխը՝ մեղուներին [փախցնում], այդպէս էլ կաշառքն է իրաւունքը հալեցնում եւ փախցնում: Իսկ կաշառքից հեռացածներին բարեբանութեամբ գովում են՝ ասելով. «Ով իր ձեռքերը թօթափում է կաշառքից... [նա կբնակուի հաստատուն բարձր վէմի վրայ]» [տե՛ս Եսայի ԼԳ 15] եւ թէ՝ «Իրաւունքի համար նա կաշառք չի վերցնում. եւ ով այսպէս անի, նա չի սասանուի յաւիտեան» [Սաղմ. ԺԴ 6]: Դարձեալ պէտք չէ արծաթը

* ախտ— կիրք, մոլութիւն

տոկոսով պարտք տալ, քանզի վաշխերն ու տոկոսներն ամբարիշտների տներում են, ասում է իմաստունը [տե՛ս Առակ. ԻԸ 8]: Սակայն եթէ, որպէս Քրիստոսի կատարեալ աշակերտ, ըստ Տիրոջ հրամանի, չես կարող փոխ տալ նրան, ումից ստանալու ակնկալութիւն չունես, որպէսզի այն բազմապատկութեամբ արքայութեան մէջ ստանաս, գոնէ ըստ մեղաւորների՝ փոխ տուր, որպէսզի վերստին հաւասար չափով ստանաս: Իսկ արծաթի անծնունդ բնութիւնը ծննդական դարձնելը հակառակ է Աստծուն, քանզի Նա կենդանիները ծնդական սահմանեց եւ ոչ թէ՝ արծաթը: Եւ՝ կենդանիները տարուայ մէջ են մի անգամ ծնւում, իսկ արծաթը՝ ամսուայ մէջ. այս ամենից դժնդակ է եւ Աստծուն առաւել ընդդէմ, քանզի դու որպէս նրանից զօրաւոր եւ իմաստուն կարողացար վերցնել այն, ինչում նա տկարացաւ:

ԿԵ

Մէկի հարուածելու համար եւս ձեռքը չմեկնել, քանզի Տիրոջից հարուածել չսովորեցինք, այլ հարուածողներին մեր ծնօտը մօտեցնել: Եւ ինչ որ խօսքով վարդապետեց, գործով կատարեց, քանզի չար ծառային, որ Իրեն ապտակեց, չսաստեց եւ չպատուհասեց: Քանզի բազում անգամ սպանութիւն է գործւում փոքր հարուածներից, էլ չեմ [ասում] աւելի սաստիկների մասին:

ԿԶ

Դարձեալ ձեռքը չմեկնել զրկանքի եւ յափշտակութեան համար, [մանաւանդ] որ հրաման ստացանք արդարութեամբ ժողովածը բաշխել եւ տալ կարօտեալներին: Եւ երբ սրանց հակառակների եւ օրէնքով հրաժարելիների դէմ շօշափելիքի ազատութիւնը փակում ենք, բացենք նրա համար բարեգործութեան օգտակար եւ պիտանի դռները: Մաքուր աղօթքներով եւ անզբօս մտքով բարձրացնենք այն առ Աստուած՝ ըստ Դաւթի. «Գիշերը ձեր ձեռքերը բարձրացրէ՛ք դէպի Սրբութիւնը եւ օրհնեցէ՛ք Տիրոջը» [Սաղմ. ՃԼԳ 2] եւ, ըստ Պօղոսի՝ «Կամենում եմ, որ այրերն ամէն ժամ իրենց սուրբ ձեռքերը բարձրացնեն առ Աստուած առանց բարկութեան եւ երկմտութեան» [Ա Տիմ. Բ 8]: Քանզի բոլոր առաքինութիւններից աղօթքն առաւել ընտանի եւ մերձաւոր է Աստծուն: Քանզի միւս բոլորն իբրեւ հանդերձանք եւ պատրաստութիւն են Աստուծոյ մօտ մտնելու համար, իսկ սա Աստուծոյ հետ դէմ–յանդիման խօսակցութիւն է: Քանզի ինչպէս որ երկրագործի ողջ աշխատութիւնը

պտուղները հաւաքելու համար է, եւ խոհարարի ջանքերը՝ կերակրելու, այդպէս էլ ամէն բարեգործութիւն, զգաստութիւն եւ պարկեշտութիւն՝ մտքի ճանապարհը հարթելու, որ Աստուծոյ հետ՝ որպէս սիրելի բարեկամի, աղօթքներով անզբաղապէս զրուցի, [սեփական] անձի եւ աշխարհի հոգեւոր ու մարմնաւոր բոլոր կարիքներն առջեւը դնի եւ Նրանից ամէն բարի գործի յաջողում եւ թշնամու որոգայթներից փրկութիւն հայցի:

ԿԷ

Եւ առաքինութեան այս մասը միւսների պէս սահմանափակ չէ, այլ անսահմանաբար ամէն ժամ է պէտք կատարել՝ ըստ տէրունական հրամանի, որ ասում է. «Արթո՛ւն եղէք եւ ամէն ժամ աղօթեցէ՛ք» [Ղուկ. ԻԱ 36]: Քանզի նաեւ բոլոր աղօթքներն Ընդունողը բազում անգամ ողջ գիշերն անցկացնում էր առ Աստուած աղօթքներով՝ մեզ օրինակ եւ ուղղութիւն ցոյց տալով: Նրանից սովորած առաքեալն էլ ասում էր. «Ամէն ինչում գոհացէ՛ք, անդադար աղօթեցէ՛ք» [Ա Թես. Ե 17]: Քանզի այսպէս, վայելչական է նախ տրուած բարիքների համար գոհանալ եւ ապա գալիքի համար աղօթել: Եւ ոչ միայն [սեփական] անձի, տան, որդիների եւ ընտանիքի համար այս անել, այլեւ՝ ողջ աշխարհի, իւրաքանչիւրի հոգու եւ մարմնի պիտանին եւ օգտակարը տնօրինելու: Առաւել եւս թշնամիների եւ ատելիների համար է [պէտք աղօթել]՝ ըստ խօսքի, թէ՝ «Օրհնեցէ՛ք ձեզ անիծողներին եւ աղօթեցէ՛ք նրանց համար, ովքեր ձեզ լկում եւ հալածում են» [Ղուկ. Զ 21]: Քանզի այս ամէնը հալածում է ատելութիւնն ու ոխակալութիւնը, որովհետեւ որոնց համար որ [մէկը] ճշմարիտ եւ աներկբայ սիրով աղօթում է եւ Տիրոջից փրկութիւն հայցում, նրանց հանդէպ ինչպէ՞ս կարող է ոխ պահել: Նաեւ թէպէտ թշնամութիւն ունենայ մէկի նկատմամբ, նախ պէտք է հաշտուի եւ ապա՛ աղօթքին մօտենայ: Քանզի եթէ հրամայում է պատարագը խափանել, քանի դեռ չի հաշտուել, որովհետեւ առանց դրա ընդունելի չէ, ո՞ւրեմն առաւել եւս՝ աղօթքը: Քանզի նախ պէտք է հաշտուել եւ ողջ ատելութիւնն ու ոխը վերացնել եւ ապա՛ աղօթքի մէջ նրանց համար Տիրոջից բարիք խնդրել: Եւ այս անել, որովհետեւ մենք էլ առաւելապէս կարիքի մէջ ենք: Քանզի, ըստ բիւր քանքարների եւ հարիւր դահեկանի թուի, միմեանց հետ անհամեմատելի են Աստուծոյ հանդէպ [գործուած] մեր յանցանքները եւ մե՛ր հանդէպ [գործուած] ընկերների յանցանքները: Ուստի եւ իրաւացի է պարտապանին սակաւը թողնել,

որպէսզի մենք էլ բազումի համար թողութիւն գտնենք: Քանզի Տէրն ասաց. «Եթէ իւրաքանչիւր եղբօր յանցանքները ձեր սրտերից ներէք, ձեր երկնաւոր Հայրն էլ ձեզ կների ձեր յանցանքները: Իսկ եթէ ձեր եղբայրների յանցանքները չներէք, ձեր երկնաւոր Հայրն էլ ձեզ չի ների ձե՛ր յանցանքները» [տե՛ս Մատթ. Զ 14]: Արդ, այսպիսի սոսկալի եւ իրաւացի հրամանի պատճառով պէտք է ողջ սրտից ներել պարտապաններին եւ սիրով աղօթել նրանց համար: Քանզի, այսպիսով, Աստուած մեզ իշխան կարգեց մեր մեղքերի թողութեան վրայ, որովհետեւ ինչ սրտով որ մենք ենք թողնում նրանց պարտքերը եւ սէր ու գութ ցուցաբերում նրանց հանդէպ, ըստ այդ չափի էլ Աստուած մեր յանցանքներն է ներում եւ Իր արարչական սէրն ու գթութիւնը ափռում մեզ վրայ:

ԿԸ

Եւ աղօթքի՝ ցերեկն ու գիշերը սահմանուած բոլոր ժամերին պէտք է փութալ Աստուծոյ եկեղեցին եւ կամ աղօթքի որեւիցէ տեղ, առաւել եւս՝ սոսկալի եւ մեղսաքաւիչ Պատարագի ժամի՛ն: Քանզի եթէ քո Տէրն անճառ սիրոյ պատճառով, իջնելով անբաւ բարձրութիւնից, պատարագում է քո մեղքերի քաւութեան համար՝ դառնալով հաշտութեան միջնորդ Հօր եւ քո միջեւ, ինչպէս եւ ասաց. «Այս է Իմ Մարմինը, որ բաշխում է ձեր մեղքերի թողութեան համար» [Մատթ. ԻԶ 26], որչա՞փ առաւել եւս իրաւացի է քե՛զ գնալ եւ ընկնել [Նրա] առջեւ եւ գոհանալ ու շնորհ ստանալ անբաւ Բարերարութիւնից, որ պարտաւորներիս, անարժաններիս եւ բիւրապատիկ յանցանքներով Նրանից ապստամբածներիս համար Իր անձը նուէր եւ պատարագ է տալիս՝ պատժապարտներիս Հօր հետ հաշտեցնելու: Եւ քանի որ մենք ամէն ժամ ենք խորհրդով, խօսքով եւ գործով մեղանչում, ուստի Նա եւս ամէն օր է պատարագում, որպէսզի ամէն օր գործուած մեղքերը քաւի: Եւ եթէ ամէն օր սոսկալի Խորհրդի կատարման ժամին գնում ենք եւ գոհանում ու շնորհ ստանում Մարդասիրութիւնից, ճանաչում երախտիքները եւ մեր աղօթքներն ու արտասուքը խառնում Նրա գթութեանն ու բիւրապատիկ երախտագործութիւններին, շնորհը ներգործում է մեզ վրայ, եւ մեղքերի թողութիւն ենք ստանում: Իսկ եթէ ծուլանում եւ սուրբ Խորհրդի կատարման ժամին չենք գնում եկեղեցի, աղօթում եւ գոհանում անբաւ Բարերարութիւնից եւ խնդրում մեղքերի թողութիւն, այլ մարմնական հոգսերը, սնոտի զբաղմունքները եւ

ծուլութիւնն ու մարմնի հեշտութիւնն աշխարհակեցոյց եւ փրկագործ Խորհրդից նախապատիւ ենք համարում, ոչ միայն Նրանից օգուտ չենք ստանում, այլեւ արհամարհանքների եւ անտեսելու փոխարէն առաւել բարկութեան ենք մեզ վրայ շարժում անախտակիր Բնութեանը: Քանզի եթէ մի երկրաւոր թագաւոր գայ քաղաք՝ բարեգործելու եւ քաղաքացիներին պարգեւներ շնորհելու, իսկ նրանք չգնան նրան ողջունելու, երկրպագելու, սպասաւորելու եւ շնորհակալութիւն յայտնելու, այլ արհամարհութեամբ զանց առնեն՝ իրաքանչիւրն իր գործով եւ աշխատանքով զբաղուելով, ոչ միայն բարի պարգեւները չի բաշխի նրանց, այլեւ մեծապէս կբարկանայ եւ կպատուհասի, հապա երբ երկնաւոր Թագաւորը գայ՝ անմահ կեանքի անապական պարգեւները բաշխելու անարժաններիս եւ ապերախտներիս, եւ մենք արհամարհենք եւ անտեսենք՝ ապականացուն եւ ցնդելին միշտ անփոփոխ անապականից նախամեծարելով, որքա՞ն աւելի Նրան բարկութեան եւ ցասման մեզ վրայ կշարժենք, քան թէ՝ ողորմութեան:

ԿԹ

Եւ ոչ միայն պէտք է աղօթել սուրբ Պատարագի առջեւ, այլեւ՝ հաղորդուել փրկական Խորհրդին, քանզի ասաց, թէ հաղորդուողների՛ն մեղքերի թողութիւն կլինի եւ ոչ թէ՝ չհաղորդուողներին: Քանզի նախ ասաց, թէ՝ «Առէ՛ք, կերէ՛ք, այ՛ս է Իմ Մարմինը» եւ ապա՛ աւելացրեց. «որ բաշխւում է ձեր մեղքերի թողութեան համար» [Մատթ. ԻՁ 26]: Եւ դարձեալ ասաց. «Եթէ չուտէք մարդու Որդու Մարմինը եւ չխմէք Նրա Արիւնը, կեանք չէք ունենայ ձեր անձերում» [Յովհ. Զ 54] եւ դարձեալ՝ «Ով ուտում է Իմ Մարմինը եւ խմում Իմ Արիւնը, բնակւում է Իմ մէջ, եւ Ես՝ նրա մէջ» [Յովհ. Զ 57]: Ահա տեսնո՞ւմ ես, որ ճաշակողների՛ փրկութեան համար է եւ ոչ թէ՝ չհաղորդուողների: Բայց նաեւ հրամայում է ոչ թէ անպատրաստ հաղորդուել, այլ՝ սրբութեամբ: Քանզի առաքեալն ասում է. «Թող մարդն իր անձը փորձի եւ ապա՛ այն հացից ուտի եւ Բաժակից խմի, քանզի ով անարժանութեամբ է ուտում եւ խմում, դատաստան է ուտում եւ խմում իր անձի համար»: Եւ թէ՝ «Այն իսկ պատճառո՛վ են ձեր մէջ բազում հիւանդներ եւ ախտաժէտներ, նաեւ շատ են նրանք, ովքեր մեռած են» [Ա Կորն. ԺԱ 28–30], այսինքն՝ անարժան հաղորդուելու պատճառով:

Հ

Սակայն թերեւս մէկն ասի. «Մի՞թէ սկզբում չասացիր, թէ Ինքն է ճաշակողների յանցանքների քաւիչը, ինչպէս եւ ասաց. «Այս է Իմ Մարմինը, որ բաշխւում է ձեր մեղքերի քաւութեան եւ թողութեան համար», իսկ այժմ էլ առաքեալի [խօսքերն] ես մէջբերում, որ ասում է. «Ով անարժանութեամբ է ուտում եւ խմում, դատաստան է ուտում եւ խմում իր անձի համար». ահա՛ եւ տարակուսանք, որովհետեւ [միմեանց] հակառակն են բարբառում»: Սակայն լսի՛ր, ո՛վ դու, [միմեանց] հակառակ չեն խօսում, այլ՝ յոյժ միաբան: Եւ [այդ] այսպէս է. մարմնին եւ արեանը վիճակուած հողանիութեայ մարդն ինչպէ՞ս է իր սրբութեամբ արժանանում Աստծուն միաւորուելու Նրա Մարմնի եւ Արեան ճաշակմամբ: Քանզի եթէ սերովբէն չէր համարձակւում մերձենալ Նրա օրինակին, այլ ունելիների կարիքն ունէր, մարդը, որ անչափ փոքրութեամբ հեռու է սերովբէին նմանուելուց, ինչպէ՞ս կարող է ճշմարտութեանը մերձենալ: Սակայն բարերար եւ մարդասէր Աստուած, ըստ մարդկանց հանդէպ ունեցած Իր անչափ սիրոյ, կամենալով նրանց Իրեն միացնել, իբրեւ սրբութեան պատճառ՝ խոստովանութիւնը եւ ապաշխարութիւնը տուեց նրանց: Որպէսզի ամէն ոք ճշմարիտ սրտով, ըստ իր մտքի գիտակցութեան, սրտի շտեմարանները մտնելով, մանրամասնաբար որոնի հոգու, մարմնի եւ մտքի, խորհուրդների, խօսքերի եւ գործերի բոլոր սխալանքները* եւ առանց ամաչելու եւ ծածկելու խոստովանի՝ ամբաստանելով մեղքերը որպէս թշնամի, ըստ կարողութեան չափի՝ ապաշխարութեան կարգը կրի եւ ապաշխարի ու սրբուի:

ՀԱ

Սակայն պէտք է գիտենալ, որ բոլոր մեղքերը, հասնելով մինչեւ չնչինները, ոչ ոք չի կարող յիշել կամ խոստովանել, թեեւ բիւր անգամ ջանայ: Կասես, թէ՝ գործերինը կարո՞ղ է յիշել եւ խոստովանել, իսկ խորհուրդներինն ու խօսքերինն ինչպէ՞ս [կարող է]: Եւ եթէ յիմար եւ մորոս ասելը գեհենին է դատապարտում [տե՛ս Մատթ. Ե 22], եւ դատարկաբանութեան համար պատասխան պիտի տրուի [տե՛ս Մատթ. ԺԲ 36], ո՞վ է, որ այս ամէնը յիշել է եւ կարող է խոստովանել: Արդ, ինչ յիշեց, խոստովանեց եւ ապաշխարեց, այդքանով սրբուեց, եւ ինչ էլ

* սխալանք— յանցանք, մեղք, զանցանք, սխալ

չկարողացաւ յիշատակել, այն Քրիստոսի Մարմինն ու Արիւնն է սրբում: Եւ ճշմարիտ են դառնում երկուսի էլ՝ Տիրոջ եւ առաքեալի խօսքերը: Քանզի ով առանց խոստովանութեան եւ ապաշխարութեան է ուտում եւ խմում [Քրիստոսի Մարմինն ու Արիւնը], դատապարտւում է՝ ըստ առաքեալի, իսկ ով խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ [է ուտում եւ խմում], քաււում է՝ ըստ Քրիստոսի: Այս նոյնն է ցոյց տալիս նաեւ Որոտման Որդին՝ ասելով. «Եթէ ասում ենք, թէ մենք որեւէ մեղք չունենք, ինքներս մեզ խաբում ենք, եւ ճշմարտութիւն չկայ մեզանում, բայց եթէ խոստովանում ենք մեր մեղքերը, հաւատարիմ եւ արդար է Նա՝ ներելու համար մեր մեղքերը, եւ Աստուծոյ Որդի Յիսուսի Արիւնը մեզ սրբում է ամէն տեսակ անօրէնութիւններից» [տե՛ս Ա Յովհ. Ա 8]: Ըստ երեւոյթին ակնարկում է այն, որ թէպէտ եւ մէկը խոստովանւում է, սակայն կատարեալ թողութիւն Քրիստոսի մեղսաքաւիչ Մարմնի եւ Արեան հաղորդութիւնն է պարգեւում: Ուսանում ենք սա նաեւ սերովբէի՝ մարգարէի [առջեւ կատարուած] օրինակից: Քանզի մարգարէն խոստովանեց, թէ՝ «Պիղծ շուրթեր ունեմ եւ պղծաշուրթ ժողովրդի մէջ եմ բնակւում»: Եւ ապա սերովբէն ունելով վերցրեց սեղանի վրայի այն հրից, բերեց մօտեցրեց մարգարէի բերանին եւ ասաց. «Ահա՛ այդ դիպաւ քո շուրթերին, քո անօրէնութիւնները կվերացնի եւ քո մեղքերը կսրբի քեզանից» [տե՛ս Եսայի Զ 5–7]: Ահա տեսնո՞ւմ ես, որ թէպէտ եւ մարգարէն սուրբ էր եւ բոլոր մարդկանցից էլ առաւել, որ մինչեւ իսկ Սուրբ Հոգու բնակարան էր եւ զօրութիւնների Տիրոջը փառքի աթոռին տեսաւ, սակայն մեղքերից մաքրուելու համար Քրիստոսի Մարմնի օրինակի կարիքն ունեցաւ:

ՀԲ

Եւ առ Աստուած մաքուր աղօթքներով ձեռքերը բարձրացնելուց յետոյ զարդարենք նրանք այլ բարեգործութիւններով նոյնպէս՝ տնանկներին տալով եւ աղքատներին ձեռք մեկնելով, քանզի այս եւս քիչ չէ նպաստում մեղքերից մաքրուելուն՝ ըստ այն [խօսքի, թէ]՝ «Քո մեղքերը ողորմութեամբ կքաւես եւ քո անօրինութիւնները՝ տնանկներին տալով» [Դան. Դ 24]: Ձեռքերով գործել եւ կարօտեալներին տալ՝ ըստ Պօղոսի խրատի. «Բարիք գործելուց,– ասում է,– մի՛ ձանձրացէք, քանի որ իր ժամանակին առանց թուլանալու պիտի հնձէք» [Գաղ. Զ 9]: Եւ օգնականութեան կարօտ բոլոր վտանգուածներին՝ հիւանդներին, տկարներին, ծերերին, առանց ծուլութեան սպասաւորել, ինչպէս

պահանջում է իւրաքանչիւրի բնական կարիքը:

ՀԳ

Ոտքերը եւս չպէտք է զատել ընտանի անդամների միաբանութիւնից եւ առանց զարդարանքների անխնամաբար թողնել, այլ պսակել դրանք իրենց բնական զօրութիւնների գործառնութեամբ: Քանզի թէպէտ եւ սա զգայարաններից չէ, սակայն նրանցից ոչնչով նուազ չէ իշխանական մտքի առաջնորդութեամբ. իւրաքանչիւր բանում ունի ընդդիմակ գործերի՝ բարու եւ չարի շարժում: Ուստի պէտք է խոհականի վերակացութեամբ, ասես հաստ եւ անքակտելի կապանքներով, ետ պահել դրանք չար եւ անօրէն ընթացքներից, չշարժել դրանք գողերին եւ աւազակներին միաբանուելու եւ հետեւելու համար՝ ըստ իմաստունի խրատի. «Որդեա՛կ,– ասում է,– ճանապարհ մի՛ գնա նրանց հետ, խոտորի՛ր քո ոտքը նրանց շաւիղներից, քանզի նրանց ոտքերը չարիքի մէջ են ընթանում, եւ արագ են արիւն հեղելու մէջ» [Առակ. Ա 15]: Եւ [չգնալ] ո՛չ պոռնկութեան կամ արբեցութեան տուն, քանզի երկուսի վերջն էլ դժոխքի յատակն է նայում, ո՛չ թատերախաղերի եւ լկտի տեսարանների, քանզի բազում չարիքների պատճառ են, ո՛չ հմայողների եւ կախարդների մօտ, քանզի Աստծուց օտարացնողներ են, ո՛չ էլ՝ չար խորհրդակիցների եւ գործակիցների մօտ՝ մէկի [հանդէպ] չարութիւն խորհելու կամ գործելու համար: Եւ միանգամից խուսափել այն ամենից, որ ոտքի վարմունքով Աստուծոյ հրամանների հանդէպ ապստամբութիւն է՝ իր եւ կամ ուրիշների վրայ չարի մոլորեցնող ներգործութեամբ: Եւ, սրանցից խոյս տալով, կարգի բերուել արդարութեան մտքերից՝ ըստ առակողի. «Արդարութեան ճանապարհներով եմ գնում եւ ճշմարտութեան շաւիղներով շրջում» [Առակ. Ը 20], այսինքն՝ ստէպ գնալ Աստուծոյ եկեղեցին եւ աղօթավայրեր՝ փառաբանելու Աստուծուն: Գնալ նաեւ խոստովանահայրերի եւ հոգեւոր խրատներ բաշխողների մօտ՝ մեղքերը խոստովանելու եւ ապաշխարութեան ու բարեգործութեան խրատ ստանալու: Նաեւ հիւանդներին եւ բանտարկեալներին այցելութեան գնալ եւ, ըստ կարողութեան չափի, օգնական լինել: Եւ ընդհանրապէս գնալ [այն] ամենին, ինչ ըստ Աստուծոյ պատուիրանների է, եւ հրաժարելիներից խոտորուել, մինչեւ որ կարողանալ Դաւթի հետ ասել. «Քո պատուիրանների ճանապարհներով ընթացայ եւ Քո ճշմարտութեան ճանապարհներն ընտրեցի» [Սաղմ. ՃԺԸ 32] եւ լսել Տիրոջից. «Դուք, որ Իմ ետեւից եկաք, Իմ միւս

Գալատեանը կվայելէք Իմ փառքի մէջ» [տե՛ս Մատթ. ԺԹ 28]:

ՀԴ

Եւ արդ, ահաւասիկ Աստուծոյ շնորհներով հոգու մասերի, մտքի շարժումների եւ մարմնի զգայութիւնների մէջ մեղքերի մուտքերը փակուեցին եւ առաքինութեան ու սրբութեան դռները բացուեցին: Քանզի ամբողջովին այս իսկ է մարդը. հոգին եւ իր զօրութիւնները, միտքը եւ իր շարժումները, մարմինը եւ իր զգայարանները, որոնք, ըստ վերոգրեալի, պէտք է ամենայն զգուշութեամբ պահել: [Չպէտք է] հրաժարելիներին ընտանենալ եւ նրանցից, [որոնք պէտք է] համարձակ կատարել, օտարանալ, որպէսզի, բարւոք եւ ընտանի հաստատութիւններից սահելով, վար չընկնի Աստուծոյ մարդը, եւ արատի որեւէ բիծ չխառնուի անարատ մաքրութեանը՝ եղծելով Նախատիպի լուսապատկեր գեղեցկութիւնը: Քանզի վերոգրեալներով արարչաստեղծ կերպարանքն այն առաջինի պէս համակ կզարդարուի՝ լաւագոյնով՝ ամբողջովին ճոխ, եւ հակառակով՝ աղքատ: «Քանզի եթէ բոլոր օրէնքները,– ասում է,– պահես եւ որեւէ մէկով մեղանչես, թերի ես եւ ոչ՝ կատարեալ» [տե՛ս Յակ. Բ 10]: Ինչպէս օրինակ՝ եթէ մէկը մարմնի բոլոր անդամներով կազմ ու յարդարուն լինի եւ որեւէ մէկով՝ պակասաւոր՝ աչքով, ձեռքով կամ անդամներից ցանկացածով, այնպիսին ամբողջովին կատարեալների հետ չէ, այլ թերի է կոչւում: Այս խորհրդով եւ օրինաւոր հրամաններով էր, որ Աստծուն ընծայուող պատարագներն [Աստուած] հրամայում էր անարատ մատուցել, քանզի կաղը, միականին, քթատը կամ այլ որեւէ թերութիւն ունեցողն ընդունելի չէր իբրեւ պատարագ [տե՛ս Ղեւտ. ԻԲ 21]: Եւ Պօղոսն այս բոլոր օրինակները գալիք բարիքների ստուեր է անուանում [տե՛ս Եբր. Ժ 1]: Ուստի այլ [օրինակների] հետ այս եւս համարւում է ստուեր, քանզի այն մարմնաւոր պատարագն այս հոգեւորի օրինակն էր, որովհետեւ ինչպէս որ այնտեղ ընդունելի էին մարմնով կատարեալները, այստեղ էլ՝ հոգեւորապէս կատարեալները ու անթերիները:

ՀԵ

Ունենք այլ զօրաւոր եւ ներգործուն օրինակ եւս՝ նիւթականի եւ աննիւթի, ախտաւորի եւ անախտի համեմատութեամբ: Բայց նախ, ամէն նիւթական եւ ախտաւոր մտածութիւն հեռու գցելով, մաքրեցէ՛ք [ձեր] մտքերն ու խորհուրդները, եւ [ապա] յստակ հայեացքով նայենք

անարատ խորհրդին: Քանզի Փեսան Քրիստոսն է եւ կոչւում է Եկեղեցու [Փեսայ], իսկ Եկեղեցին Հարսն է՝ անախտաբար միացած Բանին, ինչպէս որ փեսաւէր* Յովհաննէսն էր ասում. «Ով հարս ունի, նա է փեսայ» [Յովհ. Գ 29]: Հարսնածու** Պօղոսն էլ ասում է. «Նշանեցի ձեզ իբրեւ սուրբ կոյս՝ Քրիստոս Փեսայի առջեւ կանգնեցնելու» [Բ Կորնթ. ԺԱ 2]: Իսկ Եկեղեցու Փեսան Հարս Եկեղեցու հետ Իր միասնութիւնը սրանով է ցոյց տալիս. «Միթէ՞ կարելի՞ է առագաստի մանկանց սուգ պահել, քանի դեռ Փեսային իրենց հետ ունեն» [Մատթ. Թ 15]: Էլ չեմ յիշատակում Երգ երգոցի խօսքերը, որոնք սկզբից մինչեւ վերջ նոյնն են կրկնում՝ մարմնաւորով պատկերելով հոգեւորը՝ սրանով ոչ այլ ինչ ցոյց տալով, եթէ ոչ՝ Քրիստոսի անչափ սիրոյ մեծութիւնն Իր հաւատացեալների հանդէպ: Եւ քանզի երկրաւորների մէջ չկայ սիրոյ որեւէ այլ տեսակ առաւել, քան փեսայինն ու հարսինը, որ կարողանար ցոյց տալ Եկեղեցու հանդէպ Քրիստոսի սէրը, այդ իսկ պատճառով էլ այս օրինակը բերեց:

ՀԶ

Արդ, ինչպէս որ փեսան բնաւ չի կամենում, որ իր հարսը մարմնի անդամներում որեւէ թերութիւն ունենայ, այլ [կամենում է, որ] ամէն ինչով կատարեալ լինի, այդպէս էլ Քրիստոս կամենում է, որ Իրեն հարսնացած մաքուր անձը սրբութեամբ կատարելապէս Իրեն նուիրուի, որպէսզի հոգու մասերից կամ մարմնի զգայարաններից որեւէ մէկն Իր բնական զօրութիւնից չնուազի: Եւ ինչպէս որ փեսան, թէպէտ եւ հարսը մարմնի անդամներով անթերի լինի, սակայն կամենում է՞ նաեւ, որ հարսը զգեստների վրայ ունենայ ժապաւեններից, ոսկուց, մարգարտից եւ թանկագին քարերից պէս–պէս զարդարանքներ՝ իւրաքանչիւրն ըստ պատշաճի յարմարեցրած անդամներին, որպէսզի Իրեն հաճելի լինելու համար առաւել գեղեցկանայ, այդպէս էլ Քրիստոս է կամենում, որ առաքինի հոգին ոչ միայն, ըստ իւրաքանչիւր մասի եւ զգայութեան, չարից ազատ լինի, քանզի անդամների անարատութիւնը մեղքերի խառնուրդ չունենալն է, այլեւ սրանով չի բաւարարւում եւ կամենում է, որ, ըստ իւրաքանչիւր բնական ներգործութեան, իւրաքանչիւրի պէս–պէս ոսկիանման, մարգարտատիպ եւ ականակերպ առաքինութիւններով զարդարուի: Ուստի պէտք է ամէն մէկի ջանալ, որ, ինչպէս վերեւի խօսքը

* փեսաւէր– փեսայի բարեկամ
** հարսնածու– հարսանիքի միջնորդ

ցոյց տուեց, ըստ հոգու եւ իր մասերի, մտքի եւ իր շարժումների, մարմնի եւ իր զգայութիւնների, որեւէ պակասութիւն չունենայ պատշաճ առաքինութիւնների մէջ, որոնցով էլ հաճելի կերեւայ երկնաւոր Փեսայի աչքին եւ վառած լապտերով Նրա հետ կմտնի երկնաւոր հարսնարանի առագաստը՝ անախտ միաւորութեամբ վայելելու անզուգական փառքն ի Քրիստոս Յիսուս՝ ի Տէր մեր, որ օրհնեալ է յաւիտեանս. ամէն:

«ԳԱՆՁԱՍԱՐ» ՄԱՏԵՆԱՇԱՐ

ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏ
ԽՕՍՔ ՃՇՄԱՐԻՏ ՀԱՒԱՏՔԻ ԵՒ ԱՌԱՔԻՆԱՍԷՐ ՎԱՐՔԻ ՄԱՍԻՆ

Գրաբարից աշխարհաբարի վերածեց
ՄԵԴԱ ՍՏԱՄԲՈԼՑԵԱՆԸ

Նախաբանը՝
ՅԱԿՈԲ ՔԵՌՄԷԵԱՆԻ

Խմբագիր՝
Տ. ՄԵՍՐՈՊ ՔԱՀԱՆԱՅ ԱՐԱՄԵԱՆ

Նկարիչ՝
ԱՐՄԷՆ ՔԻՒՐՔՉԵԱՆ

Համակարգչային շարուածքը՝
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿԻԶՈՂԵԱՆԻ

«Գանձասար» հանդէս, Երեւան, Մոսկովեան 11